Կր 12 377-378 1991 Ա

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ

1860

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՅՔ.

ԱՄՓՈՓԵՍՏՐԱԿ 5.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿԻՍԵՐՆԵՒ ԵՐՐՈՐԴ ՁԱՒՈ ԸՆԴԴԷՄ ԿԱՏԻԼԻՆԱՑԻ։ Ս. Նազարեանց . 321—338
ՏԻԵԶԵՐՔԻ ՇՐՆՈՒԱԾՔԸ։ Ս. Ալեքսիքեանց . . . . . 339—355
ԻՍԼԱՄ։ (Մահմետական հաւատը.) Գ. Ակ. . . . եանց . . . . . 356—377
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ կամ Էմմինուէլի օրագրութեան էջերէն . . . 378—396
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. Կանոնք վասն ընդունելութեան սրպէս հրատարա-
րդիչք Լազարեանց Ճեմարանի։ . . . . . 397—400

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.
1860.

ՄԱՅԻՍ 1860 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

Մ. ՏՈՒԼԼԻՈՅԻ ԿԻՆԵՐՈՒՆ

ՀԱՄԲԵՐՔ ԸՆԴԴԵՄ ԱԱՏԻԼԻՆԱՅԻ։

ԵՐՐՈՐԴ ՀԱՒՈ ԳԼՈՒԽ Ի ԿԱԼԻՈՒՏԱՅԻՔ։

Նախաձանձն ջնջելիս։

Երբ որ կատիլինան հեռացել էր, Հռոմի մէջ եղած դարանագործների պարագլուխ Լենտուլոսը աշխատեց Ալլոբրոգեանց դեսպանքը, որ այն միջոցին պատահմամբ գտնվում էին Հռոմի մէջ, իւրեանց մեծաւորների անիրաւութեան վերայ դանգատելու, Պ. Ումբրինոսի միջնորդութեամբ նոքա խառնել դարանագործութեան մէջ։ Սոքա պատմեցին այդ իրողութիւնը իւրեանց պաշտպանին Հռոմի մէջ, Սենատօր Կ. Ֆաբիոս Ջանգային, որ այդ մասին անդնկութիւն տուեց Կիկերոնին և նոյնպէս տուեց գեսպաններին, որ սոքա դարանագործներից նամակներ առնուն իւրեանց ժողովրդի վերայ։ Այս կատարվեցաւ։ Երբ որ Ալլոբրոգեանց դեսպանքը Հռոմից դուրս էին գնացել, ընթացակից լինելով նոցա Վուլտուրկիոսը, Կիկերոնը պայմանադրութենից յետոյ

Հրամայեց Մուլվեան կամրջի վերայ Հռոմից դուրս ըմբռնել նորանց երկու Պրետորների, Լ. Գալլկոսի և Կ. Պոմպտինոսի ձեռքով և բերել իւր մոտ դէպ ի Հռոմ։ Սորանից յետոյ, Կիկերոնը 3 օրին դեսպան-ների ժողովից ծերակոյտը կանկորդիա աստուածուհու տաճարի մէջ, ուր դարանագործքը Ալլոբրոգեանց վկայութեամբ յաղթված, սպի-ռւեցան խոստովանել իւրեանց յանցանքը։ Ծերակուտի ժողովը ա-ւարտվելուց յետոյ, նոյն օրի երեկոյին, Կիկերոնը այս երրորդ ճառի մէջ իմաց տուեց ժողովրդին գաւաճանութեան յայտնագործութիւնը։

ԱՀԱ ՃԱՌԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ։

1. Նեբաֆ-ըէան մէջ Կիկերոնը հրատարակում է ժողովրդին, թէ տէրութիւնը վերկված էր, և սորանով ճանապարհ է բացում իւրեան դէպ ի նոյն իսկ իրողութեան պատմութիւնը. Գլուխ 1։
2. Պատմում է ճարտարախօսը թէ ինչպէս և որպիսի դիպաստութեամբ յայտնագործած էր գաւաճանութիւնը, թէ ինչպէս դարանագործքը Վուլտուրկիոսի և Ալլոբրոգեանց վկայութեամբ, իւրեանց յատուկ նամակներով և խոստովանութեամբք պարտաւորված էին, և թէ այս պատճառով ծերակոյտը — որի գատակնիքը հարցաքննութեննից յետոյ յառաջ է բերվում, մեծարոյպէս յիշելով իւր պաշտօնակից Ընտանիքոսի և Պրետորների գործակցութիւնը — որոշել է Կիկերոնի անունով շնորհակալութեան տօն կատարել աստուածների համար. Գլուխ 2 — Գլուխ 6։
3. Ցոյցանում է թէ մանաւանդ Ջուպիթեր-ոչ աստուածներից տեսանելի շնորհովը դէպ ի լոյս էր հանված այս գաւաճանութիւնը, ըստ որում նոքա ակնյայտնի նշաններով ակնարկութիւն էին արած դէպ ի հասարակապետութեան վտանգը, և թէ դարանագործների պատիժը նոյն իսկ աստուածների օգնութեամբ պատրաստված է։ Գլուխ 7— Գլուխ 9։
4. Վերջաբանում քաջալերում է ժողովուրդը, այն տօնախմբութիւնը որ պիտի լինի ի պատիւ աստուածների, կատարել մեծահարկի կերպով, և յանձնում է իւրեան իւր քաղաքակիցների պաշտպանութեանը և բարեացակամ յիշատակին, խոստանալով թէ իւր հիւպատոսական արժանաւորութենից հրաժարվելուց յետոյ էս, պատրաստ է աշխատասէր լինել տէրութեան օգտի համար. Գլուխ 9—վերջը։

ԳԼՈՒԽ 1. Աստղաբաշխութիւնդ, ով Ալբիւսացիք, և ձեր բոլորիցուն կեանքը, գոյքը, սոսկալիքը, կամայքը և զաւակը, այլև այս բնակարանը հոչակաւոր տէրութեան, այս ամենաթագաւոր և ամենազեղեցիկ քաղաքը, այսօրուան օրից, անմահ աստուածներուն ամենատաք սիրով դէպ ի ձեզ, իմ աշխատութեամբ, խորհրդակցութեամբ և դիմադրաւ լինելով, տեսանելիք ահա կրակի և սրի բերանից, գրեթէ անխախչելի վտանգի կոկորդից դուրս եկած, ձեր հառնար պահպանուած, ձեզ յետ դարձուցած: Եւ, եթէ մեր համար ոչինչ պակաս քաղցր և նշանաւոր են այն օրերը, որոնց մէջ ազատուելիք վտանգներից, քան թէ այն օրերը որոնց մէջ ծնած ենք, ըստ որում խնդութիւնը փրկութեան վերայ հաստատի է, բայց ծնանելուց յետոյ գալոցքը անհաստատ են. այլև, ըստ որում ծնանելիք առանց դժուարութեան, բայց ախտժելով պտուղները փրկութիւն, ուրեմն ստրակից չկայ, որ — եթէ մեք, ինչպէս յայտնի է, այս քաղաքի հիմնարկուն [1]) բարեացակամութեամբ և ժողովրդի կարծիքի հիման վերայ դաստակից արեցինք մշտնջենաւոր աստուածներին — ձեր առաջև և ձեր գալոց զաւակներուն առաջև պիտոյ է մեծապէս լինի այն մարդը, որ նոյն և այն հիմնարկած ու ընդարձակած քաղաքը պահից ու պահպանից: Վասն զի բոլոր քաղաքի, տաճարների, պաշտօնատեղիքի, տների և պատերի տակ գրեթէ ապրէն դրած ու շրջապատած կրակը հանդրեցինք մեք, որպէս և այն սուրբերը որ քարշած էին հաստատակամութեան վերայ, հալածեցինք և նոցա պաքնելը (սուբ ծայրերը) բաց դարձուցինք ձեր պատանոյից: Որովհետև այս բաները ծերպակս տի մէջ լուսատիպ, բացայայտ և հաստատի են կացուցած իմ ձեռքով, այժմ կամիմ հառնատ պատմել ձեզ, ով Ալբիւսացիք, որ դուք, անտեղեակքդ, գործի ընթացքից կարօտանալիք լինելով, եթէ պրպիսի մեծակշռ և պքեան պատր ու պայծառ իրողութիւնք էին դրբա և եթէ ինչ կերպով հետաքննութեան ու վերահասութեան տակ էին ընկած:

ԳԼՈՒԽ 2. Նախ յայտնի լինի ձեզ, որ որ Պատիլինան մի քանի օրից յառաջ դուրս պրծաւ քաղաքից, յետ թողած Լուսի մէջ իւր յանցանքի կամակիցքը, այս ամբարիշտ պատերազմի առիթ

[1]) Հռոմէացիք, որ հեռական ժողովրդի կարծիքով դաստակից և եղէ աստուածներ ի պատիւ նորա կարգած տօնը «Պվիրինալիա» (Quirinalia) անուամբ, կատարվուէր փետրվարի 17 ին:

նայանգուդն առաջնորդքը, ևս միշտ հակեցի և հոգայի, ով Ամե-
ըիտացիք, թէ ինչպէս այդքան մեծ և այդքան թագուն դաւանա-
գործութենից կարող էինք մեք ոգջ մնալ: Ա՛սան զի, այն միջո-
ցին, երբ Պատիւենան արտաքսումի քաղաքից (այսուհետև վա-
խում չեմ այս խօսքի պատճառով բամբասանք յարուցանել իմ
վերայ, որովհետև խիթոպի էր ինձ այն բամբասանքը մանաւանդ,
որ նա կինդանի դուրս է գնացել), այսինքն այն միջոցին, երբ կա-
մէի տարագիր առնել նորան, այսպէս էի մնածում թէ կամ դա-
րանագործներն միւս մասը դուրս կ'երթայ միանգամայն, կամ թէ
նոքա, որ չեա էին մնացած, առանց նորան լքնելու էին թոյլ և
տկար: Եւ որովհետև տեսայ ևս, որ ինչ մարդիկ ամենամեծ կա-
տաղութեամբ և ամբարշտութեամբ բորբոքված գիտէի ևս, նոյն
մարդիկը չեա էին մնացել մեր մօտ և Հռոմի մէջ, ևս օր ու գիշեր
գործ գրեցի այն բանի վերայ, որ խանգամ և տեսանեմ թէ ինչ
են գործում գոքա, ինչ ձեռնարկութեան վերայ են. այնպէս որ,
երէ իմ խօսքը հաւատալի չէր լինում ձեր ականջներին անարա-
րշտութեան անհաւատալի մեծութեան պատճառով, ևս այնպէս բա-
ցայայտ կացուցանեմ գործը, որ գուք այն ժամանակ միայն մտա-
տոտական տեսութեամբ հոգ տանէիք մեր վրկութեանը, երբ որ
մարմնաւոր աչքով տեսած էիք նոյն իսկ չարագործութիւնը: Ու-
րեմն, երբ որ վերահասու եղայ, թէ Ալբրիգեանց գնացքը
Պ. Վենետկոյի կողմից զրգռված էին պատերազմ յարուցանելու
Տրանսալպինեան սահմանում և խոովութիւն ձգելու Պօալլեայի
մէջ, և թէ նոքա դէպ ի Պօալլեա, իբրեանց քաղաքացիներին մօտ նոյն
ձանապարհով ուղարկված են նամակներով ու պատուէրներով առ
Պատիւենան, և նոցա ուղեկից էր առած Տ. Վ՛ուլտուրիոսը և
տրան ևս յանձնած էր նամակ առ Պատիւենան. պատուհ ժամանակ
համարեցի ևս որ, ինչ որ շատ դժուարին էր և ևս միշտ խնդրած
էի վշանջնեալուղ առաւելութիւններից, բոլոր գործը ոչ թէ միայն իմ,
այլև ծերակուտի ու ձեր ձեռքով ամենայնի կացուցանվի: Ընդ
պատճառ ով, երեկեան օրին, Լ. Ֆլակկոս և Պ. Պոմպոնիոս պրե-
տորքը, քաջասիրտ և հայրենասէր մարդիկ, կանչեցի իմ մօտ,
յայտնեցի նոցա բոլոր գործը և ցոյց տուեցի թէ ինչ արժան էր
առնել: Խակ նոքա որ ցանկացողքն էին հաստատակամութեան
բոլորանման պարծանքին, յօժարութեամբ և անյապաղ յանձն
առան գործը և երեկոյեան պահուն ծածուկ ուղեորվելով հասան

Մուլհան կամելջէն և այն տեղ մեռոակաց ամեռաոդներուն այն-պէս երկու բաժին եղան, որ նոցա մէջ տեղում ծնող Ֆիբեր դեռը և կամելջը. այլև ինքեանք, առանց որ և իցէ կասկածանք յա-յուցանելու տարած էին իւրեանց հետ բազում քաջ տղամարդիկ, և ես Թէոդորեան տահմանից տեսերաւոր ընտիր երիտասարդներ շատ — որոնց ձեռնհասութիւնը հասարակաց օգտի համար միշտ գործ եմ դնում եւ — ուղարկած էի նոցա պաշտպանութեան հա-մար: Ընաւօրս մեռ երեք ժամուն, երբ Ալեքսոպեանց դեսպանքը, բազմութիւն ուղեկիցներով կամէին ահա ոտք կոխել Մուլհան կա-մուրջն վերայ և նոցա հետ միասին Վ. ուլտուրկիոսը, վերոյիշեալ յարձակվումն նոցա վերայ. և նոցա եւ մեր կողմից դուրս են քաշո-վում տուրերը: Գործը յայտնի էր պրետորներին միայն, բայց միւս-սերը ոչինչ չգիտէին:

ԳԼՈՒԽ 3. Ապա Գոմպոնիոսը և Ֆլակկոսը վերայ հասա-նելով, հանգարտուսմ կոխը որ եղած էր: Զօրք նամակները որ գտանվումէին այն ուղեկիցների մեռ, անպատառ կնիքներով յանձ նվումէին պրետորներին. բայց ինքեանք ընտրեալ բերվումէին իմ մեռ առաւօտեան լուսադարձին: Ընդհակառակ, այս բոլոր անառա-ուած ամբարշտութիւնների մեքենայող Աիմբրոս Գաբինեոսը, որ գեռ ոչինչ կասկածանք չունէր, կանչեցի մեռս. ապա հրամայեցի նոյն-պէս բերել Լ. Աուռունկուլեոսը և նորանից յետոյ Պ. Պեթեդոսը. բայց ամենից յետոյ գալես է Լ. Վեռուլոսը, որ կարծեմ անցեալ գի-շերին իւր տովորութենից դուրս երկար ժամուց անքուն էր մնացել, նամակներ պատրաստելով: Եւ որովհետև այնպէս արժան թուե-ցաւ, որ այս սէրութեան բարձրագոհու և երեւելի մարդերին, որ պատահած անցքը լսելով, առաւօտուն բազմութեամբ հաւաքված էին իմ մեռ, բանամ նամակները նախ քան թէ ծերակուտի ա-ռաջև կը հրատարակէի նորանց, ու գուցէ, եթէ ոչինչ խիթալի բան չգտանվէր նոցա մէջ, երևի, որպես թէ ես անվարհրդաբար այդքան մեծ ազդուի էի ձգել հասարակութեան մէջ. այս պատ-ճառով ասացի թէ ինձ անհնար էր այլապէս ընթանալ, քան թէ հասարակութեան վտանգին վերաբերեալ անցքը լսովին հրատա-րակել ծերակուտի առաջև: Վ. ասն պէ, ով Ավիերնասցիք, եթէ այն բաները որ իմոց էին առած ինձ, չատուվէին գործով, այնու-ամենայնիւ կարծումէի որ հասարակութեան այդպիսի մեծ վտանգ-ների մէջ չիպտ ինձ անպիք վախենալու ու չափազանց հեղգութեան

մեղադրանքից: Շ. ուսում, բազմութեամբ ժողովրդի ծերակոյսը, ինչպէս տեսաք դուք. և մինչ այս բաները լինում էին, խոկայն, Ա-ղրիպիանոս խրատատուութեամբ, Կ. Մուղիկիոս Պրեսոր քաջ ազամարդը ուղարկեցի, որ Ակեթեդոսի տանից դուրս բերէ ինչ ապա-նոշական ղէնք պատահելու էր այն տեղ, և նա դուրս հանեց այն տե-ղից անհամար բազմութիւն դաշնակիների և տուրերի:

ԳԼՈՒԽ 4. *Ընտիր մէջ ներս բերին Պ. Մուղուկիոսը, ա-ռանց Գալլիացոց: Ծերակուտի հրամանով և ժողովրդի անուա-նով խոստացայ նորան ապահովութիւն. քաջալերեցի, որ անվա-կիւղ խոստովանէր ինչ որ գիտէր: Ապա, երբ որ վախը ինչ հան-դստացել էր իւր մեծ երկիւղից, խօսեց նա այսպէս. այն ունէր ինքը Պ. Լենտուլոսից նամակ ու պատուէր Աստիկնեացին, այսպիսի խորհրդով, որ սա ստրուկների գործակցութեամբ, ինչքան կարելի է շուտով մեռեցնար զօրքով քաղաքին, և այն ժամանակին, երբ քա-ղաքը ամենայն կողմից, ինչպէս սահմանած ու որոշած էր, հրձիզ տրած (կրակ տուած) և անհամար բազմութիւն քաղաքացիների կոտորած կը լինէին, նոքա պատմէր ինքը որ ընդունէր թէ փախս-տականքը և թէ միաւորվէր այս քաղաքային դիւանագիտների հետ: Եակ նոքա ինքած Գալլիացիքը խոստովանեցին թէ Պ. Լենտու-լոսը, Ակեթեդոսը, Ստատիլիոսը երբեմն ու նամակ են տուել սոցա իւրեանց ցեղակիցների վերայ, և թէ նոցա ու Լ. Վասսիոսի կող-մից այնպէս է հրամայած սոցա, որ ինչքան կարելի էր շուտով ձիաւոր մարդիկ ուղարկին դէպ ի Իտալիա, և թէ հետևակ զօրք պահասելու չէին իբրեանց: Թէ Լենտուլոս հաւատացուցել է սոցա Սիբիլեան գրքերի [1]) և զհարպատուս դուշակողների [2]) պատգա-*

---

[1]) Ինչպէս ասուել էին զրույցը, Տարկվինիոս Սուպերբոսը արձանով ստացաւ Էրիթրեեան կամ Կումեան Սիբիլլայից (մարգարէ կին էին) երեք գիրք, որոնց մէջ կարծուէին գտանել մարգարէութիւնք Հռոմէական տէրութեան գալոցքի վերայ: Վերակացութիւնը այս գրքերի, որ պահվում էին Իպիտեր տաճարի մէջ, յանձնած էր սկզբում երկու, յետոյ տասն, և ապա Սուլլայից, տասն և հինգ մարդկերի (Quindecimviri), որ պարտ էին խորհրդատու որ գիտուածների մէջ բանալ այդ գիրքերը և հետևելով դոցա, խրատ տալ ժո-ղովրդին: Երբ որ նոքա, դոցա մէջ գիշած հրոյրեաց քրամը Կապիտոլիոնի, ոչնչացան, նո-րերը պատրաստեցին, հաւաքելով Իտալիայի և Յունաստանի մէջ գտանված Սիբիլլեան պատգամախօսութիւններից. բայց ասրանց, 741 թուական. հռոմ չէին. յետոյ, մի մասով այրել տուեց Օգոստոսը, ըստ որում անհարազատ:

[2]) Այս զհարպատուս գուշակողների (haruspicum) պատգամախօսութիւնքը պատ-կանում էին կապիտոլիան հրայրեաց գրին. այդ պատկառելը, որ ասվում էին հարուսպիցես (haruspices) հարուսկեան բառից հարուգա (haruga), մարթելի անասուն, և հնացած բա-ռից սպիցերե (specere), գուշակում էին դալոցքը, քննելով անասունների փորոտիքը:

մահաստեղեան հիմքի վերայ, թէ ինքն էր այն երրորդ Կոլնելիոսը (Սուլլա), որին պիտոյ է հատանիլ այս քաղաքի թագաւորութիւնը և հրամանատարութիւնը. թէ իւրեանից յառաջ եղել են Կիննան և Մուլլան. նոյն մարդը ասած էր, որ այս տարին օրհասական տարի է այս քաղաքի և տէրութեան համար, որ լինելու էր տասերորդ տարին Վեսպասիանոս կոյս աղջկներուն անպատիւ կացութեանէն յետոյ, բայց քահանայապետը ղինի հրաշագործին Կապիտոլինի: Ասում էին թէ Կեթեգոսի և միւսերի մէջ եղած է մի հակառակութիւն, ըստ որում՝ Վեսպասիանոսը արժան է համարել, որ քաղաքացիների կոտորածը և քաղաքի հրձգութիւնը լինեն Սատուրնոսեան [1]) ասնի միջոցին, բայց Կեթեգոսին շատ երկար էր թվում այդ ժամադրութիւնը:

ԳԼՈՒԽ 5. Թող երկար չձգեմ խօսքս, ով Կվերիտացիք. ձեր հրամայեցինք դուրս հանել նամակները, որը որի կողմից ասվում էին թէ տուած են: Նախ ցոյց տուեցին Կեթեգոսին նամակի դրոշմը. ճանաչեց. ձեր քակեցինք նամակի կապերը, կարդացինք: Նորա յառուկ ձեռքով գրած էր Ելեբրոգացոց ծերակուտին և ժողովրդին, թէ ինքը ինչ որ հաստատապէս խոստացած է նոցա դեսպաններին, կատարելու էր, և խնդրում էր, որ նորա ևս վարվին այնպէս, ինչպէս յանձն էին առած նոցա դեսպանքը: Ընդհակառակ Կեթեգոսը, որ փոքր ինչ յառաջ մի քանի անընշան խօսքեր այն տուրերի և դաշնակիների մասին, որ նորա մեծ գոհանալած էին, պատասխան տալով ասել էր, թէ նա սիրող է ընտիր երկաթաշէն յօրինուածների,—բայց երբ որ կարդացին նամակը, թուլացած, յուսահատուր, խղճմտանքից յանդիմանված, պապանձեցաւ խոցոյն: Նկատ բերվեցաւ Պատռիկեոսը, ճանաչեց իւր գիրքը և ձեռքը: Պարզացվեցան նամակներ դրեթէ նոյն բովանդակութեամբ. խստովանեց նա: Ապա ցոյց տուեցի նամակները Վիտուլոսին և հարցրեցի, արդեօք ճանաչում էր գիրքը: Այո՛, ասաց: «Երդնուիս, ասացի ևս, դա մի յայտնի գիրք է, պատկերը քո պապի, որ ակա-

---

[1]) Սատուռնալեան ասնը կատարվում էր Հռոմի մէջ դեկտեմբեր ամսին, ի յիշատակ ոսկի դարուն, սկզբում մի օր, յետոյ երկու օր, վերջումը, Կալենդաս կոչուբ ժամանակում, հինգ օր, այլև սկսանելով դեկտեմբերի 17 ից: Այս ասնախմբու թէեան միջոցին բարեկամք ու ծանօթք բերում էին միմեանց ընծայք, և ծառայք իւրեանց տէրանցից ստանում էին թափերութիւն և ազատասրտութիւն խօսել որովհետև այս ասնի օրերին անհոգ անձնատուր էին ուրախութեան, ուրմն այս միջոցս երեսում գարնատոհմներին ոչ անյարմար, իւրեանց խորհուրդը իրագործելու:

նաւաղ մարդ էր, որ անօրինակ սիրով սիրած է իւր հայրենիքը և իւր քաղաքակից-քը, որ և անբաւական ձայնով պիտոյ է հրաժա-րեցնել քեզ այդքան մեծ ամբաւշտութենից»: Կարգադրութեան նոյն բովանդակութեամբ նամակներ Ալբրոգանոյ ծերակուտի և ժո-ղովրդի վերայ: Համարձակութիւն առնելի, եթէ կամիր նա ինչ և իցէ խօսել այս իրողութիւնների վերայ. բայց նա սկզբում ասայ թէ չկամի. մի փոքր յետոյ, երբ որ բոլոր հարցաքննութիւնը կա-տարվել էր արդէն, վեր կացաւ տեղից, հարցրեց Դաւլեացիներից, թէ ինչ դործ է ունեցել նոցա հետ, և ինչ բանի համար եկած էին նոքա իւր տունը, նոյնպէս և Ա՛ուլտուրկիոսից: Երբ որ նոքա հա-մառօտ և միատեսակ պատասխան տուեցին, թէ ոչի միջնորդու-թեամբ և քանի՛ անգամ եկած էին նորա մօտ, այլև հարցրեցին նոքանից, մի՞թէ ոչնչ խօսած չէր իւրեան հետ Սիբիլեան դու-շակութիւնների մասին. այնուհետև, յանկարծ խելագարի լինելով իւր յանդգնութից, ցոյց տուեց թէ ինչքան մեծ էր խղճմտանքի զօ-րութիւնը: Ա՛սան ել, թէպէտ նա կարող էր ուրացած լինել այն բանը, բայց խոհեմ, ամենեցուն ակնկալութենից դուրս, խոստո-վանեց նորան: Ապա էս ահա փախած նորանից ոչ թէ միայն այն յաջողակ հանճարը և վարժութիւնը խօսելու մէջ, որ միշտ ցոյց էր տուել նա, այլև յայտնի և հրապարակված յանցանքի զօրու-թեամբ հրաժարվեցաւ նորանից այն անամօթութիւնը, որով իւր անձը միւսերից գերազանց էր կացուցել, և նորա վատաբարո-թիւնը: Իսկ Ա՛ուլտուրկիոսը առաջարկից յանկարծ որ դուրս հան-վի և բացվի այն նամակը, որ իւր ասելով, տուած էր նորան Լ՛ին-տուլոսի ձեռքով Կատիլինեայի վերայ: Ելա տեղ թէպէտ Լ՛ենտու-լոսը ամբոխվեցաւ ամենատատասկ բարկութեամբ, տակաւին ձանա-չէց թէ իւր կնիքը և թէ իւր ձեռքը: Գրած էր այդ նամակի մէջ, թէպէտ առանց անունի, բայց այսպէս. «Գէ ուլ եմ ես, կ'իմանաս այն մարդուց, որ ուղարկեցի քո մօտ: Ողջ տար, որ տղամարդ լինիս, և մտածիր թէ մինչև որ տեղ ես հասուցել դու քո դի-տաւորութիւնքը, և նկատիր թէ ինչ հարկաւոր էր քեզ: Խնամք տար որ դու զրաւես քո համար ամենեցուն գործակցութիւնը, այն և շատ սաստկապէս մարդկի»: Յետոյ ներս բերվեցաւ Գաբինիոսը. սա թէպէտ նախ և յառաջ սկսաւ անամօթաբար պատասխանել, բայց վերջումը ոչնչ ուրացած չեղաւ այն բաներից, որոնց մասին Գաւլեացիք վեզապուսներն նորան: Եւ ինձ, ով Վերգիլեացիք,

ինչպէս շատ հաւատոի երևեցան այն ապաշաւութիւնքը և յանդգնութիւնքը, նամակները, կնքանշանները, վերջապէս ամեն միոի խոստովանութիւնը, նոյնպէս և առաւել հաւատոի երևեցան միւս ապաշաւութիւնքը, այսինքն պարտաւորների երեսի դոյնը, աչքերը, կերպարանքը, լուութիւնը: Պատճառ, այնպէս շուարված էին նոքա, աչքերը դէպ ի գետին բևեռած, այնպէս զօրանման նայուածքին երբեմն միոը դէպ ի միւս, որ ասես թէ ոչ թէ օտար մարդիկ պարտաւորութէին նորանց, այլ ինքեանք իւրեանց անձը:

ԳԼՈՒԽ 6. *Երբ որ պարտաւորների ասելիքը լսված ու լմնցված էին, ով Պվերիտացիք, այնուհետև խորհրդակից եղայ ես ծերակուտի հետ, թէ ինչպէս արժան կը համարէր նա վարվիլ, միտ դնելով աերութեան օգտին: Նախագահ անդամների բերանից լսվեցան շատ խիստ և ազդու պատգամներ, որ և ծերակոյտը առանց այլևայլութեան ընդունեց: Ես որովհետև դեռ ևս գրով պրոշմած չէ ծերակուտի սահմանադրութիւնը, յիշողութեամբ կասիմ յայտնել ձեզ, Պվերիտացիք, թէ ինչ է սահմանադրել ծերակոյտը: Նախ, պատուաւոր բառերով շնորհակալութիւն է մատուցանվում ինձ, որովհետև իմ պրակտիկութեամբ, խոհեմութեամբ և նախատեսութեամբ հասարակապետութիւնը ազատված էր սոսկալի վտանգներից. յետոյ, արժանապէս և իրաւացի գովասանվում էին Լ. Ֆլակկոս և Կ. Պոմպոնիոս պրետորքը, որովհետև իւրեանց քաջ և հաւատարիմ գործակցութեամբ օգնական էին եղած ինձ. այլև իմ պաշտօնակիցս, մի քաջ տղամարդի շնորհվում դովեստ, որովհետև այն անձինքը, որ մանկութիւց էին եղած այս դաւաճանութեանը, հեռացուցել է իւր առանձին և հասարակապետութեան խորհուրդներից: Ընդ այնպէս վճռահատեցին, որ Պ. Լենտուլոսը, երբ որ արդէն ցած էր դրել իւր պրետորական պաշտօնը, բանտարկվի. նոյնպէս, որ Կեթեգոսը, Սատուրնիոսը, Փ. Վաբինիոսը որ բոլորեքեան ներկայ էին, ուղարկվին դէպ ի բանտ: Նոյն վճիռը կապվեցաւ ընդդէմ Լ. Վասսիոսին որ պահանջել էր իւր հանար քաղաքի հրձգութեան պաշտօնը. ընդդէմ Կեսարիոսին, որին, ինչպէս պատուաւորվեցաւ ասենի մէջ, յանձնած էր Ապուլեան, այն տեղե իսաչնարած ժողովուրդը խառնակելու համար. ընդդէմ Պ. Ֆուլվիոսին որ այն դաղթականներից էր, որ Լ. Սուլլան տարաւ դէպ ի Ֆեղուէ քաղաքը. ընդդէմ Կ. Մանլիոս*

Խիղճին, որ յիշեալ Տուբիոսի յետ միասին միշտ դործակատար է գտանվել վերովիշեալ Ալբրոգացիքը. ընդդէմ Պ. Ամբրենոսին, այն սարկութենից ազատված մարդուն, որ, ինչպէս յայտնի եղաւ, առաջին անգամը տարել է Գալլեացիքը Գաբինիոսի մօտ: Այլև ծերակոյտը այնպիսի ներողամտութեամբ ընթացել է, ով Ակիրտացիք, որ կարծումէր թէ, այդքան դաւանադործների միջից և տնային թշնամիների այդքան մեծ բազմութենից ինն մարդ միայն և ամենավատթարքը պատուհասելով և հասարակապետութիւնը պահպանելով, միւսների սիրտը կարող էին բժշկվել իւրեանց սխալութիւից: Այլև իմ առաջարկութեամբ, մշանջենաւոր աստուածներին նոցա պարգևած անօրինակ յաջողութեան համար շնորհակալութեան ածն է կարգված, ով Ակիրտացիք, ըստ որում այդ յաջողութիւնը առաջին անգամն է, որ այս քաղաքիս հիմնարկութենից յետոյ վիճակվել է ինձ, խաղաղագետս հիւպատոսիս. և այդ ածնը կարդած է այսպիսի խօսքերով. «Որովհետև ես ազատել եմ քաղաքը հրայրեացքից, քաղաքացիքը կոտորածից, Իտալիան պատերազմից»: Եթէ այս շնորհակալութեան ածը համեմատիք դուք այլ շնորհակալութեան ածների հետ, դոցա մէջ եղած խարութիւնը այն է, որ միւսները կարդացրած էին երբ որ հասարակապետութիւնը բարւոք և խելացի անտեսավարված էր, բայց սա այն խորհրդով միայն, որ հասարակապետութիւնը պահպանվել է: Նա ինչ որ առնելի էր, արվել ու լրացել է առենական կարդով: Պատճառ, թէպէտ Լենտուլոսը, երբ որ առենի առաջև հարցափորձվելով խոստովանեց իւր մեղքը, ծերակուտի դատաստանով զրկված էր ոչ թէ միայն պրետորութեան, այլև քաղաքացու իրաւունքից, սակայն օրինաւոր կերպով հրաժարվեցաւ նա իւր քաղաքական պաշտօնից. ուրեմն, եթէ Պ. Արբոսը, այն երեւելի տղամարդը, խղճմտութեան մէջ չընկաւ, ապանելով Պ. Վլաս կիան որպէս Պրետոր, որի մասին ոչինչ յատկապէս դատավճիռ եղած չէր, մեք արդէն ազատ ենք այդ խղճմտութենից պատժելով Պ. Լենտուլոսին որպէս մանաւոր մարդ:

ԳԼՈՒԽ 7. Այժմ, որովհետև դուք, ով Ակիրտացիք, ամենամբարիշտ և ամենավտանգաւոր պատերազմի անաստուած առաջնորդները կապած ու ըմբռնած ունիք ձեր ձեռքում, պիտոյ է ձեզ այնպէս հաւնորել, որ Կատիլինայի զօրքերը, բոլոր յոյսերը և կարողութիւնքը կործանված են, հալածական լինելով այս վտանգ-

նելը քաղաքի: Այդ մարդը երբ որ քաղաքից դուրս էի վարում ևս, այո՛ նախատեսանումէի հոգով, Ակերիտացիք, թէ երբ հեռացած էր Պաուիլեան, պէտք էր ինձ այնուհետև երկիւղ ունենալ ոչ Պ. Ղենտուլոս քնատութենից, ոչ Ղ. Վասսիոսի մոլմնելութենից և ոչ իսկ Ակեգեոսի կառաղի խելագարութենից: Նա միայն երկիւղալի էր սոցա ամենեքին միջից, բայց այնքան երկար, մինչ քան որ գաանվուածքը քաղաքի պատերի մէջ: Ամեն բան դիտէր նա, ամենայն եղելութիւնը պահումէր. մարդիկ իւր մօտ կանչել, վարձել, համախոհ առնել իւրեան կարող էր, համարձակվումէր. կար նորա մէջ հնարագիտութիւն և սրտան գործ դնելու համար պատկառ էր նորա մէջ ոչ լեզու և ոչ յաջողակութիւն: Երբէն որոշեալ գործել յառաջ տանելու համար, ունէր նա որոշեալ ու սահմանեալ մարդիկ: Այնու ամենայնիւ, եթէ մի բան պատուիրած էր, հաւատում էր, թէ դա կատարված է. չիար ոչ մի բան, որին չլինէր ինքնին ձեռնամուխ, որից օգուտ չքաղէր, որի վերայ չհսկէր. յրտի, ճարպիկ ու սուի կարող էր տանել: Այս մարդս ահա, այսքան եռանդ, այսքան պատրաստական, այսքան ձեռնարկու, այսքան խորամանկ, այսքան հսկող ամբարշտութեան մէջ, այսքան շրջանկատ վատթար բաների մէջ, եթէ քաղաքի դատաւորութեան միջից չհալածէի դէպ ի դուրս աւազակութեան բանակը (թող ասեմ ինչ որ ղգումեմ, Ակերիտացիք), ապա հիշատութեամբ մի այդպիսի ահագին ծանրութիւն թաւալեցուցած լինելու չէի ձեր վզերից: Ոչ. նա չէր պատրաստելու մեզ Պաուսանեան տօնախմբութիւն. ոչ այդքան յառաջ քարողելու էր հատարակապետութեանը կործանութեան և օրհասի օրը և ոչ ևս այն տեղ հասցած կը լինէր բանը, որ կնիք ու նամակ որպէս մի բացայայտ յանցանքի վկայք ընդունէին: Եւ այս բանը, նորա բացակայութեամբ, կատարվել է այնպէս, որ ոչինչ գողութիւն մի մանաւանդ ան մէջ երբէք այնքան հրապարակով գաանված չէ, ինչպէս այս գաւաճանութիւնս այսքան մեծ հասարակապետութեան մէջ, բացերևս գաանված ու ընդունած է: Բայց եթէ Պաուիլեան քաղաքի մէջ մնացած լինէր մինչև այսօր, թէպէտ քանի որ նա այդ տեղ էր, նորա բոլոր խորհուրդներին ներկակ կացայ և ընդդիմացայ, սակայն, թող ասեմ շատ մեղմ կերպով, հարկաւոր եղած կը լինէր մեզ սրով պատերազմել նորա հետ, և ոչ իսկ մեք, քանի որ նա լինելու էր քաղաքի մէջ որպէս թշնամի, երբէք հասարակապետու-

թիւնը ազատելու չկինք այդպիսի մեծ վտանգներից այդքան խա-
ղաղութեամբ, այդքան հանդարտութեամբ և անխռովութեամբ:

ԳԼՈՒԽ 8. Այնու ամենայնիւ, այս բոլորս, ով Վէրիտաս-
ցիք, այնպէս է կառավարվել իմ ձեռքով, որ երևումէ Հանդգնաւոր-
աստուածների կամքով ու խորհրդով կատարված և նախախնամած:
Այդ բանը կէս մի կարող ենք մտքով գուշակել, որովհետև դժուար
թէ մարդկային իմաստութեան գործ կարող էր լինել այսքան մե-
ծաքանչիւռ իրողութենների ղեկավարութիւն, և կէս մի այնպիսի ան-
միջական կերպով այս ժամանակերումն օգնական եղան մեզ նորա,
որ նորանց զրկեթէ պարզ աչքով տեսանել կարող ենք: Վ՚ասն զի,
Թողունք այն նշանները, զոր օրինակ, դիշերային միջոցում արև-
մուտքի կողմից տեսած հրեղէն ջահեր և երկնակամարի բոցավա-
ռութիւնը, կայծակնաթափութիւնք պայծառ ցերեկով, երկրա-
շարժութիւնք և միւս գուշակութիւնք որ այնքան յաճախ պատա-
հեցան մեր հիւպատոսութեան միջոցին, որ այս ներկայ անցքերը
տես թէ յառաջապէս գուշակումէին Հանդգնաւոր աստուածքը:
Լայց, ինչ որ ասելու իմ ձեղ, Վէրիտացիք, դորան պիտոյ չէ զանց
առնել կամ լռութեան տալ: Պատճառ, անկրկնիւ եմ, որ դուք
պահած էք ձեր յիշողութեան մէջ այն անցքը, երբ Պոտտայի և
Տորկվատոսի հիւպատոսութեան օրերումէ շատ բաներ Պապիտոլիո-
նի վերայ կայծակնահար եղան, Հանդգնաւոր աստուածների ար-
ձանքը տեղից խախտվեցան և հին մարդերի արձաններ գլորվեցան
և օրէնքի պղնձեայ տախտակները հալուեցան. կայծակնահար եղաւ
և նա որ հիմնարկել է այս քաղաքս, Ռոմոլոսը, որ ինչպէս յի-
շեցի է ձեզ, ոսկեզօծ պատկերով կապիտոլիոնի վերայ որպէս ծծկեր
մանուկ շրթունքը պարզումէր դէպ ի էդ գայլի պտուկները: Այն
ժամանակին, երբ որ հաւաքվեցան զոհագուշակ հմայքը Ետրու-
րիայից, ասացին թէ մօտենումեն կոտորած, հրայրեացք, օրէնքի
պղնձեայ տախտակների կործանութիւնը, քաղաքային և տնային
պատերազմ և բոլոր աշխարհի ու թագաւորութեան կատարածը,
եթէ Հանդգնաւոր աստուածների բարկութիւնը չհաշտեցնէինք և
աղօթք ու պաղատանք չառնէինք, որ նորա իւրեանց ամենակարո-
ղութեամբ դարձուցեցնեն նոյն իսկ օրհասը 1): Այսպէս, գուշակող-

---

1) Այս խօսքերից մի փոքր մնապաշտութեան հոտ է գալիս. և մեռածող ընթերցողը պիտոյ է կասկածանք առնու Կիկերոնի հաւատի մասին. բայց այդպէս չէ խոսքը:

նելի խրատով, ողջոյն տան օր Թատրոնական հանդէսներ կատարվեցան, և ոչ մի հնար, որ պատշաճաւոր էր հաշտեցնելու սատանայքը, զանց արվեցաւ. նոյնպէս հրամայեցին նոքա, որ Իսպիտալի պատկերարձանը աւելի մեծ կերպարանքով շինվի և կառուցանվի Պապիտոլոնի վերայ և հայեցուցանվի դէպ ի ներհակ կողմը քան Թէ յառաջուց էր, այսինքն դէպ ի արևելք. և ասացին Թէ յոյս ունէին, որ եթէ այն պատկերարձանը, որ տեսանուժէք դուք, ուղղէր իւր հայեացքը դէպ ի արևելք, հրապարակը և խորհրդարանը, ապա ընդդէմ քաղաքի և Թագաւորութեան օգտի պատրաստած դարանագործութիւնքը այնպէս կը լուսաւորվէին, որ ծերակոյտը և հռոմէական ժողովուրդը կարող էին նկատել նոքանց: Եւ այն օրերի հիւպատոսքը յանձնեցին հոգւոյժոնելին կառուցանել պատկերարձանը, ինչպէս ասած էր գուշակողնելից. բայց գործը այնքան ծանրաշարժ գտանվեցաւ, որ ոչ այն հիւպատոսնելի և ոչ մեր ձեռքով, այս օրից յառաջ դլուխ է հկել:

Ա՛յս բանի մէջ, ո՛ր մարդը, Ակերիտացիք, կարող էր լինել այնքան շեղված ճշմարտութենից, այնքան կոյր, այնքան կապված մտքով, որ ուրանար Թէ այս բոլորը, որին ականատես էք դուք, մանաւանդ Թէ այս քաղաքս, կատաւարվումէ մշտնջենաւոր աստուածնելի կամքով ու հրամանով: Ա՛սան ղև, երբ որ գուշակողքը պատգամ էին տուել, Թէ սպանութիւնք, հրայրեւացք և կործանութիւնք են պատրաստվում հասարակապետութեանը, և ապստամբ քաղաքացինելի ձեռքով—ինչ բաներ այն միջոցին, յանդգնքի մեծութեան պատճառով անհաւատալի էին Թվում, նոյն բանները նկատելիք դուք և տեսաք, որ ոչ Թէ միայն յղացած էին քաղաքացինելի մտքում, այլև յանձն առած լրացանելու: Բայց մի Թէ սմենևին բացայայտ չէ, որ սմենաբարի մեծ Իւպիտերի կամքով եղած է այն բանը սոյն իսկ օրիս, որ, երբ առաւօտուն հրապարակի միջից իմ հրամանով և դարանագործքը և նոցա մատնողքը տարվումէին դէպ ի Կոնկորդիայի տաճարը, կատարվէր կապիտոլոնի վերայ այն պատկերարձանը: Երբ որ սա կատարված

Վիկերոնը, ամենալուսաւոր հռոմայեցին, աւելի բարձր մտածող մարդ, քան Թէ ժողովրդի հաւատն էր, գործ է դնում ժողովրդի հակացողութիւնքը, իւր խօսքերին աւելի այժ և զօրութիւն տալու համար: Ոչ Թէ միայն առնախօսը, այլև աշխարհի ինքնակալները նա տոհմացած են շատ անգամ այս և այն գործի մէջ աստղիք տալ ժողովրդական հաւատին, Թէևպէս ինքեանք իրենց սրտի մէջ այլապէս էին մտածում:

էր, դէմքը դարձուցանելով դէպ ի ձեզ և դէպ ի ծերակոյտը, այնուհետև ծերակոյտը և դուք ամենայն խորհուրդ, որ յղացած էր ընդդէմ հասարակաց օգտին, տեսաք ձեր առաջև պայծառացած ու բացված: Ա՛յս կշռով առաւել տեղւոյն է պատժի արժանաւոր են դոքա, որ համարձակվել են ապականիչ և ամբարիշտ ձեռքով հրձիգ առնել ոչ թէ միայն ձեր տուներըը և յարկերը, այլև աստուածների տաճարքը և սրբարանքը: Եթէ ասէի, թէ ես եմ ընդդիմացել դոցա, պիտոյ է չափից դուրս պարծանք սեփականէի ինձ և անտանելի լինէի ձեզ իմ անհամեստութեան պատճառով. ոչ. նա, այն Իւպիտերը ընդդիմացել է դոցա. նորա կամքն է եղել պահպանել այդ տաճարները, այս քաղաքս, ձեզ բոլորիքեանքդ: Ա՛շանջենաւոր աստուածների առաջնորդելով յղացայ ես, Ավիլիւտացիք, այս խորհուրդը և յանձն առայ այս կամքը և արեցի այս մեծակշիռ յայտնագործութիւնքը: Ելդարև, այն խաւարութիւնը, որ պիտոյ է ձգվէր Ելբբրոզեանց մէջ, մի այդպիսի մեծ գործ, Լենտուլոսի և այլ անպիսին թշնամիների ձեռքով այնքան յիմարապարտ երթէք հաստատացած լինելու չէին անճանօթ և օտարերկրեայ մարդերի, այլև նահանիներ յանձնած, եթէ մշանջենաւոր աստուածքը չպատժէին կուրութեամբ այդպիսի յանդուգն մտածութիւն: Ո՞նչ է քէ մտածում. եթէ գալլեացի մարդիկ մի այնպիսի քաղաքական հասարակութենից, որ դեռ ևս չէ բոլորովին հպատակ կացուցած, որ միում մի հաս ժողովուրդը, որ երևումէր թէ կապող է և անյօժար լինելու չէ պատերազմ բանալ հռոմէական ազգի հետ, անփոյթ են արել իշխանութեան և մեծամեծ օգուտների յոյսը որ անակնկալ առած էր նոցա պատրիկեցի մարդերի կողմից, այլև ձեր օգուտը իւրեանց յատուկ օգտից նախապատիւ են համարել. մի՞ թէ կարծումէք թէ այդ բանը եղած չէ աստուածոյ նախախնամութեամբ, մանաւանդ որ այդ Գալլեացիքը ոչ թէ պատերազմելով, այլ լուռ համախոհութեամբ դարձնադործների հետ կարող էին յաղթել մեզ:

ԳԼՈՒԽ 10. Ա՛յս պատճառով, Ավիլիւտացիք, որովհետև սահմանադրութիւն է եղել, որ բոլոր տաճարների մէջ շնորհակալութեան տօն կատարվի, ուրեմն տօնախմբեցէք այդ օրերը ձեր կանանց ու զաւակների հետ. արդարև շատ անգամ մշանջենաւոր աստուածներին մատուցած են արդարացի և վայելչական փառք ու պատիւ. բայց ոչ մի ժամանակ այսպիսի պարտաւորաշահ: Պատ-

*Ձառ, դուք աղաւաճած էք մի անողոքմ և թշուառ կոյուսից և աղաւաճած էք առանց սպանուելեան, առանց արիւնհեղուելեան, առանց զօրքի ու պատերազմի: Խաղաղական զգեստով [1]) յաղթեցիք դուք, ես միայն լինելով ձեզ խաղաղագիտ առաջնորդ և զօրապետ: Յիշեցէք միայն, Ակիրիտացիք, որ բոլոր քաղաքական երկպառակութիւնքը, ոչ թէ միայն նոքա, որ լսած էք, այլև որ ինքեանքդ կարող էք մնաբերել և տեսած էք: Լ. Սուլլան յաղթահարեց Պ. Սուլպիկիոսին [2]). քաղաքից արտաքսեց Կ. Մարիոսին, պահապանը այս քաղաքի [3]), և քանչ տղամարդկը շատ, կէս մի դուրս ձգեց քաղաքական հասարակութենից, և կէս մի վերայրեց միջից: Կն. Ոկտավիոսը [4]) որպէս հիւպատոս զէնքով հալածեց քաղաքից իւր պաշտամնակիցը. այս բոլոր հրապարակ հեղեղեցաւ պիտակների բազմութեամբ և քաղաքացիների արիւնով. յետոյ յաղթող հանդիսացաւ Կինան Մարիոսի հետ միասին: Ընդհակառակ ամենաւոր տղամարդկրի սպանութեամբ խաւարվեցան տէրութեան լուսատու ճրագները: Ընդ այնպէս յաղթութեանը յետոյ վըէժխնդիր եղաւ Սուլլան [5]). հարկաւոր չէ և ասել թէ մինչև որ աստիճան փոքրացնելով քաղաքացիների թիւը և ինչքան թշուառութիւն բերելով հասարակապետութեանը: Երկպառակվեցաւ

---

[1]) Բնագրումը ասած է togati, այսինքն զգեստաւորվածք տոգայով (toga) որ կրումէին հռոմեացիք որպես վերարկու, խաղաղութեան միջոցին. դորա ներհակն է Armali զինաւորվածք:

[2]) Այս ամփոփումը, նոր քաղաքացիք ներս ընդունելով հին ժողովրդականքերի մէջ, այն տեղ հասցրեց բանը, որ Սուլլայից առվեցաւ դերագոյն հրամանակալութիւնը Մինրիդատեան պատերազմի մէջ և տրվեցաւ Մարիոսին: Այնուհետև Սուլլան իւր լեգիոններով գնաց դէպ ի Հռոմ և հալածեց Մարիոսի համախոհքը: Սուլպիկիոսը սպանվեցաւ և Մարիոսը փախստական եղաւ բանտի միջից դէպ ի Աֆրիկա:

[3]) Մարիոսը ասվումէ այսպէս, որովհետև կարծումէին թէ տէրութիւնը պահպանվել է նորա յաղթութիւններով Կիմբրացոց և Տեւտոնացոց վերայ:

[4]) Կն. Ոկտավիոս, Սուլլայի համախոհներից մինը, տարափոր արեց իւր պաշտօնակից Կինան որ նոր ի նորոյ գարձել էր Մարիոսի կուսակից: Բայց Կինան գրաւեց հռոմէական լէգիոնքը որ դասնվումէին Կամպանիայի մէջ և յետ կանչեց Աֆրիկայից Մարիոսին. և սորա միասին 668 ին (Հռոմի շին. յետոյ) տիրապետեցին Հռոմին, ուր Ոկտավիանոսը սպանվեցաւ հիւպատոս Ոկտավիանոսը, և այլ երեւելի մարդիկ:

[5]) Երբ որ Սուլլան, յաղթելով Մինրիդատին Բոյոտիայի մէջ, 672 ին. Հռոմի շին. յետոյ տիրապետեց Հռոմին, նշանաւոր կայուց իւր մուտքը քաղաքի մէջ մի անօրինակ արիւնհեղութեամբ և զարհուրելի անգթութեամբ:

Ա. Լևսիդոսը [1]) այն ականատես քաջ տղամարդից, Ավ. Կատուլոսից. ոչ այնքան նորա յատուկ կորուստը, ինչքան միւսների կորուստը սուգ բերից հասարակապետութեան վերայ: Եւ՛ մեզ այն երկպատակութիւնքը, Ավերիտացիք, ունեին այսպիսի խորհուրդ, որ կամէին ոչ թէ կործանել, այլ փոխել հասարակապետութեան կարգերը. նոցա դիտաւորութիւնը այն չէր, որ չլինի ոչինչ հասարակապետութիւն, այլ որ ինքեանք լինէին գլխաւոր հրամայողքը այն հասարակապետութեան մէջ, որ լինելու էր: Ոչ թէ կամէին նորա, որ այս քաղաքը այլևս կրակի ու բոցի մէջ, այլ որ ինքեանք փառաւորվէին այս քաղաքի մէջ: Դարձեալ, այն բոլոր երկպատակութիւնքը, որոնցից ոչ միևը պահանջել էէ հասարակապետութեան կորուստը, այնպէս էին, որ վերջացան ոչ թէ միաբանական հաշտութեամբ, այլ քաղաքացիների ստուգմամբ: Այլ այս պատերազմի մէջ, որի նման սոսկալին և անդութը երբէք եղած չէ, ինչքան կարող էին մտաբերել մարդիկ, և որպիսի պատերազմ ոչ մի բարբարոս ազգ երբէք տուած չէ իւր արևնակիցների հետ, վերջապէս մի պատերազմի մէջ, ուր Լ. Տիտուրոսի, Կատիլինայի, Կասսիոսի, Ակհենոբոսի ձեռքով դրած էր այսպիսի օրէնք, որ բոլոր ողջ մնացածները քաղաքի ողջ մնացած մասներում դասակից լինէին Թշնամիների — ահա մի այսպիսի պատերազմի մէջ այնպէս եմ լինելիացիս, Ավերիտացիք, որ ամենեքեանքդ պահպանվէիք ողջ և առողջ. և, մինչ ձեր Թշնամիքը կարծում էին թէ ողջ կը մնան այնքան քաղաքացիք, որքան փրկվելու էին համառատած ապտող արի բերանից, իսկ քաղաքի այնքան բաժինը, որքան մնալու էր կրակից ազատ — ես և քաղաքը և քաղաքացիքը պահեցի ողջ ու անապատ:

ԳԼՈՒԽ 11. Եւ այս բաների փոխարէն, Ավերիտացիք, ոչինչ վարձ իմ առաքինութեանս, ոչինչ նշան մեծարանքի, ոչինչ ազատ ցոյց պարծանքի չեմ պահանջում ձեղանից, բայց միայն այսօրեան օրից մինչև վերջ յիշատակը: Ձեր սրտերի մէջ կամիմ հիմնարկել և կատուցանել իմ բոլոր յաղթական կամարները, բոլոր մեծարութա-

---

[1]) Մ. Լեպիդոս, 677 թուակ. հռոմի չէն. յետոյ հիւպատոս, ընդխմացաւ Սուլլայի թաղմանը մարսեան դաշտի մէջ, այլև կամեցաւ յետոյ մի քանի օրէնք և կարգադրութիւնք խախտել Նորան ընդխմացաւ իւր պաշտօնակից Կ. Կատուլոսը, և գործը հասաւ մի կռուի, ուր հեռի մարսեան դաշտից, ուր յաղթվեցաւ Լեպիդոսը, և մեռաւ Սարդինիա կղզումը, ուր փախել էր նա:

կան զարդարանքը, վառքի արձանները, արձանքի նշանները: Ոչինչ անհաս նիւթի կարող չէ ուրախացնել իմ սիրտը, ոչինչ անբարբառ նշան և ոչինչ այնպիսի բան, որ կարող էին ձեռք բերել և սեփի պահաս արժանաւոր մարդիկ: Ձեր յիշողութեամբ, Ավերիտացիք, մեր գործերը կը մնանին, խօսք ու գրուցով կ'ամէն, գրաւոր յիշատակարաններով կը հասանին գալոց ազգերին և ամրաւ պահեստ կը լինին. և նոյն օրը, որ յուսամ թէ լինելու է անմոռանալի յաւիտեան, կարծեմ թէ պահած էր թէ քաղաքի փրկութեան և թէ իմ հիւպատոսութեան յիշատակը մշանջենաւորելու համար. և թէ մի և նոյն միջոցին այս հասարակութեան մէջ հանդիսացել էին երկու քաղաքացիք որոնց մինը 1) ձեր թագաւորութեան սահմանքը տարել ու հասուցել է ոչ թէ մինչև երկրի, այլև երկնքի եղերքը, իսկ միւսը նոյն թագաւորութեան բնակութեանը և ամենայնիւ պահպանել է կործանութենից:

ԳԼՈՒԽ 12. Իսկ որովհետև այն գործերը որ ես կատարեցի, չեն այնպիսի բազդաւորութեան և պայմանի տակ որոնց վճռակված են այն մարդերի գործերը, որ կատարել էին օտարերկրեայ պատերազմներ, ըստ որում հարկաւոր է ինձ ապրել նոցա հետ միասին, որոնց յաղթել ու հնազանդեցուցել եմ: բայց նոքա, օտարերկրեայ պատերազմների առաջնորդքը, թողած էին թշնամին կամ սպանած, կամ թէ ձնշած. այս պատճառով, ձեր պարտականութիւնն է, Ավերիտացիք, խնամք տանել որ, եթէ միւսերին իւրեանց իրաւացի գործերը օգտակար եղան, ինձ երբ և իցէ միասակաւ չլինին իմ գործերս: Ա՛սան ալ, եթէ ես հոգ տարայ, որ յանդուգն մարդերի ամբարիշտ և անատուած խորհուրդները չկարողանան միասել ձեզ, ապա և ձեր պարտականութիւնն է հոգ տանել, որ դոքա ինձ չմիասեին: Ծէպէս, Ավերիտացիք, և ինձ յատկապէս կարող չէ դողանից միասս հասանել. պատճառ, բարեխորհուրդ մարդերի ձեռքում կան մեծ պահպանողական հնարները, որ միշտ պատրաստ են օգնական լինել ինձ. հասարակապետութեան մէջ կայ մեծ արժանապատուութիւն որ միշտ անբաժրբառ պաշտպանելու է ինձ. մեծ է խղճմտանքի զօրութիւնը, և ինչ մարդիկ անվոյթ կ'առնէին

---

1) Պոմպէոս մեծը, որ այն ժամանակում յայտնի եղած աշխարհների սահմանից դուրս բոլոր ծովերի մէջ յաղթահարել էր ծովային աւազակները և Միհրիդատի թագաւորութիւնը հնազանդեցուցել էր հռոմէական իշխանութեանը: Նորա երեւելի գործերը գովաբանում Ցիցերոնը իւր ճառի մէջ վասն Մանիլեան օրէնքի (Pro lege Manilia):

դորան, կամելով ինձ բանաբարել (զօր. առնել), ապա ինքեանք պիտոյ է մատնէին իւրեանց անձը: Այլև, կայ մեր մէջ այնպիսի հոգի, Ակնրիտացիք, որ ոչ թէ միայն ոչ ոքի յանդգնութեան չկամ մէնք տեղիք տալ, այլև մեր կողմից պատրաստ էնք միշտ հալածել բոլոր ամբարիշտները: Նայց, եթէ անապին թշնամիների բոլոր կատաղութիւնը հալածվելով ձեր կողքից, յարձակվէր իմ վերայ միայն, ապա հարկաւոր էր ձեզ մնախոհ լինել, Ակնրիտացիք, թէ ինչպէս այսուհետև լինելու էր այն մարդերի դրութիւնը, որ ձեր փրկութեան համար յանձն էին առել առելութիւն և ամենայն տեսակ վտանգներ: Իմ մասին յատկապէս, ինչ է ինձ համ դեռ ևս, որ կարող էի ձեռք բերել կեանքի վայելչութեան համար, մանաւանդ որ արդէն կրելով իմ վերայ ձեզանից յանձնած պատուաւոր պաշտօնը, և առաքինութեան պարծանքը, չեմ տեսանում ոչինչ աւելի բարձր աստիճան, որին ցանկալի լինէր ինձ հասանել: Ուրեմն մի հատ լսուցանելի գործ մնում էհ ինձ, Ակնրիտացիք. այսինքն, ինչ բաներ յառաջացուցել եմ ես իմ հիւպատոսութեան օրերում, նոյն բանները իմ առանձնական կեանքի մէջ ոտնձգել սպառ մէջ և պանծալի կացուցանել, այնպէս որ եթէ որ և իցէ առելութիւն յանձն էի առել ես, պահպանելով հասարակապետութիւնը, թող ապա դա վերաբերէր նախանձոտների սիրտը և սպասաւորէր իմ վատքիս: Ա՛լ երջապէս, այնպէս կը վարվիմ ես հասարակապետութեան մէջ, որ հանապազ մտաբերէի իմ գործերը և խնամք տանէի, որ նոքա երևէին առաքինութեամբ և ոչ թէ դիպուածով արած: Դուք, Ակնրիտացիք, որովհետև գիշեր է արդէն, երկրը պաղութիւն մատուցէք այն խպիտերին, այս և ձեր քաղաքի պահապանին, և հրաժարվեցէք դէպ ի ձեր օթևանքը, և գորանց, թէպէտ արդէն հալածված է վտանգը, պաշտպանեցէք պահապանելով և հսկողելով, ինչպէս յառաջնութեայ գիշերին արած էք: Այլ բանը որ աւելի երկար հարկաւոր չլինէր, գորան հոգաբարձու կը լինիմ ես, Ակնրիտացիք.

Ս. Նալբեանց:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ՇԻՆՈՒԱԾՔԸ.

Այ որ իւր ծանօթ տարերի ու ծառերի մէջ նստած է իւր օթևանում, իւրայիններին մօտ, կամ թէ մի ընտիր հացկերութեան վերայ, նորան բաւի է այս, և նա մնախոհ չէ ասելիս: Այլ երբ առաւօտուն վաղ արեգակը իւր փառահեղութեամբ դուրս է գալիս, նա չգիտէ թէ որ տեղից է դալիս դա, և երբ արեգակը երևում է մայր է մտանում, չգիտէ նա, թէ ուր է երթում դա, և ինչ տեղ բոլոր գիշերը ծածկուած իւր լոյսը, և թէ ինչ թագուն շաւղի վերայ դարձեալ գտանում է իւր վերկրքի տարերը: Կամ թէ, երբ որ լուսինը միանգամ դունագիտի և նուազ, միւսանգամ բոլորակ և լիամասն ըզօծնում է գիշերի մէջ, դարձեալ չգիտէ մարդս, թէ ինչ է դորա պատճառը. և երբ որ նա վեր է նայում դէպ ի աստեղազարդ երկինքը, ուր մի աստղ շողշողում է ասելի գեղեցիկ և ուրախ քան թէ միւսը, այնուհետև մտածում է նա, թէ դորա բոլորքեան իւր հասնելը էին այն տեղ, այնու ամենայնիւ չգիտէ աստուգապէս թէ ինչ կամէին դորա: Այլ դովանի չէ, որ մարդս ամենայն օր լինելով այդ բանին ականատես, չէ հարցանում, թէ ինչ խորհուրդ կայ այս տեղ: Երկինքը մի մեծ գիրք է, որ պատմում է Աստուծոյ ամենակալողութիւնը և բարութիւնը, և այդ գրքի մէջ գրած են շատ և փորձուած հնարներ պահպանելու մեզ անապաշտութեան և մեղքի երեսից, և աստղերը են ոսկի տառերը այդ գրքի մէջ: Այլ դա գրած է մի օտար լեզուով. դորան կարելի չէ հասկանալ առանց թարգմանչի: Այլ ով որ միանգամ ուսել է կարդալ այդ գրքի մէջ, այդ ազգեսի մէջ, և կարդում է դորան, այնուհետև նորա համար երկարանալու չէր ժամանակը, երբ որ նա գիշերով միայնակ դաշտերում արդէն դու բռնում. և երբ որ գիշերի մթութիւնը կամ էր նորան մոլորեցնել դէպ ի մի չարագործութիւն, նա երբէք կապող չէր յանձն առնուլ դորան:

Ասա պատճառով դնում ենք այս տեղ մի փոքր բան, նախ և յառաջ Երկրի և Արեգակի մասին, ապա Լուսնի և Աստղերի մասին:

Ա. ԵՐԿԻՐԸ ԵՒ ԱՐԵԳԱԿԸ։

Ինչպէս երեւումէ մեր աչքին, և ինչպէս բազմութիւնը հաւատումէ, պիտոյ է լինելը երկիրը իւր բոլոր սարերով և ձորերով մի մեծ բոլորակ գաշտ, մի ահագին մեծ սիւռաւակի նման։ Նորա եզերքից դուրս ոչինչ բան չկայ աւելի. այն տեղ, ասես թէ, երկինքը զուգաւորված է երկրի հետ և որպէս մի մեծ գաւառակ կիսագունդ դրած է նորա վերայ և ծածկումէ նորան։ Ընդ տեղ օրի մէջ եղանումէ և մտանումէ արեգը, երբեմն աւելի վաղ և երբեմն աւելի յետոյ, երբեմն դէպ ի ձախ մի որոշեալ ծանօթ սարի կամ տան մօտ, երբեմն դէպ ի աջ, և յառաջացնումէ օր ու գիշեր, ամառն ու ձմեռն, և գիշերով լուսին ու աստղեր և սոքա երեւումէ այնքան շատ բարձր կանգնած մեր գլխի վերայ։

Ընդ բոլորը լինելու էր այս ընդունելի, միայն թէ ոչ ոք աւելի լաւ տեղեակ չլինէր գոցա. բայց աստղագիտակերը և օրացոյց շինողները գիտեն գորանց աւելի լաւ։ Պատճառ, նախ, եթէ մի մարդ հետանումէ իւր օթեւանից և կամի ճանապարհորդել մինչեւ երկրի ծայրը, մինչեւ այն եզերապահմանը, ուր կարելի էր մի եղանոզ աստղ ձեռքով յատկանակել և դնել իւր ծոցի մէջ. դիցուք թէ նա ապրելի մինչեն դուրս էր գնացել իւր օթեւանից, ապա ընդարել էր նա պատշաճաւոր ժամանակը։ Պատճառ, նա կարող է ուղևորվիլ, և թէ կամէր, Ասիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի վերայով դէպ ի Ամերիկա և այն տեղից դէպ ի Եւրոպա, Ֆրանսիա, Գերմանիա և Ռուսաստան, մանաւանդ հետեւանօք քրիստոնեայ ազգերի միջով, ցամաքից դէպ ի ծով, և ծովից դարձեալ դէպ ի ցամաք և այսպէս միշտ յառաջ գնալով։ Բայց վերջապէս, երբ որ նա նստել էր մի ծառաբունի վերայ և կամէր մտածել թէ ինչքան ժամանակ է անցել իւր, տանից դուրս գնալուց յետոյ, և թէ գեռ ևս ինչքան հետի հարկաւոր էր ճանապարհորդել մինչեւ կը հասանէր երկրի ծայրին և կը վերադառնար. ահա յանկարծ զարհուրումէ նորա սրտի մէջ մի քաղցր հայրենական իմայութիւն. ան փոքր փոքր նկատումէ նա ամենայն բան, ինչպէս որ դա էր իւր հայրենի աշխարհում։ Նա դարձեալ լսումէ իւր աշխարհի բնիկ լեզուի ձայները. վերջումը նկատումէ մի ևկեղեցու կաթուղիկէ, որ սեպել էր արդէն յառաջուց և ուղղելով իւր ընթացքը այն տեղ, գալիս է մի լաւ ծանօթ գիւղ, և գնումէ գեռ ևս

երկու կամ երկք ժամի ճանապարհ, մինչև կը լինէր իւր ընտանի աշխարհում, բայց երկրի վերջը երբէք տեսած չէր: Այսինքն նա ուղևորվել էր երկրի չորս կողմով, այնպէս, ինչպէս մի պիծ կաւիճով քաշուածինք մի դնդաձև մարմնի վերայով, և վերջումը դարձեալ հետ էր եկել այն տեղ, ուստի հեռացել էր:

Երդէն աւելի քան թէ քսան այդպիսի ճանապարհորդութիւնք արած են երկրի չորս՝ կողմով, զանազան ուղղութեամբք: Երկու մինչև չորս տարու միջոցում, ինչպէս յաջող կ'երթար բանը, կարելի է լրացանել մի այդպիսի ճանապարհորդութիւն: Մի° թէ անզգայի ծովագնաց նաւարկու Աւուկը երկու անգամ իւր կեանքի մէջ ուղևորված չէ բոլոր երկրի չորս կողմով, և չէ վերադարձել միւս կողմից: Բայց երրորդ անգամին, վայրենի մարդիկը Ովայհի [1]) կղզու մէջ սպանեցին նորան:

Այս իրողութենից և միւս այլ ստոյգ նշաններից մակաբերեցինք, խոստովանութեան ուսումնականքը այսպէս. Երկիրը չէ մի լոկ տարածուն, բոլորակաձև տափարակ. ոչ, նա մի ահագին մեծ գունդ է. այլև, նա կախուն և կառուն է ազատապէս և առանց խարխխի, ինչպէս իւրեանց տեղում արեգակը և լուսինը, սիեզերքի անչափելի տարածութեան մէջ, ցածից ու վերից երկնային աստղերի մէջ միանգամայն: Այլև, երկիրը շուրջ շուրջանակի, ուր գտանվում ցամաքահող և ուր ջրմութիւնը կամ աստիճ ցուրտը թոյլ էր տալիս, պատած է անհամար բուսականներով և բնակարան է անթուանների և բանաւոր մարդկերի: Ձէ սկիզբ երբէք մտածել, թէ այսպէս, արարածների մի մասը գլխիվայր կախ էր ընկած և երկիրգի մէջ էր, մի գուցէ բաժանվէր երկրից և օդի մէջ ցած ընկնէր: Դա ծիծաղելի է: Վերևայն տեղ, մարմինները իւրեանց ծանրութեամբ մօտ են քարշվում դէպ ի երկիր, և կարող չեն փախչել նորանից: Վերևայն տեղ աստուեն դէպ է ցած, ինչ որ ոտքի տակումն է, և դէպ է վեր, ինչ որ գլխի վերայից գուրս է բարձրանում: Ոչ ոք նկատում չէ, կամ թէ կարող չէ ասել, թէ նա ցածումն էր: Վերևնքեան վերևումն են, քանի որ նոքա երկիրը ունէին իւրեանց ոտքի տակ և լուսազարդ կամ աստղալից երկինքը իւրեանց վերայ:

Բայց ընթերցողը ոչ փոքր զարմանալու էր, եթէ այս առա-

---

[1]) Ովայհի կղզին պատկանում Անտարկտիայի կամ Պոլինեզիայի Սանդվիչեան կղզիների ժողովին և առնական է դաշա մէջ:

ջին անգամն է, որ նա լսումէր թէ ինչքան մեծ է այդ գունդը: Պատճառ, երկրի սրամտաբերը [1]) դէպուղիղ հայեացքով մակերեւոյթի մի կէտից, միջակէտի միջով դէպ ի միւս կէտը, կացուցանումէ հազար ութն հարիւր քան գերմանական մղոն [2]): Այլ գունդի շրջապատը բաղկացնումէ հինգ հազար չորս հարիւր գերմանական մղոն: Նորա մակերեւոյթը ունի աւելի քան թէ 9 միլիոն քառակուսի մղոն տարածութիւն, և դորանից երկու երրորդաչափը ջուր է և մի երրորդաչափը հող: Այլ նորա բոլոր նիւթը բաղկացնում է աւելի քան թէ երկու հազար վեց հարիւր, վաթսուն երկու միլիոն մղոն ձողաչափի հաշուով: Այս բանը ուսումնականքը չափած ու հաշուած են ամենաճիշդ կերպով և խօսումեն դորա վերայ որպէս մի հաստատակ բանի վերայ: Այլ ոչ ով կարող չէ հասու լինել Ստուծոյ ամենակարողութեանը, որ այս ահագին մեծ գունդը օդի մէջ կախուն կրում է իւր անտեսանելի ձեռքումը և ամենայն փոքրիկ բուսականի նորա վերայ տալիս է իւր յօդը և մնունդը և մանուկին, որ ծնում է, մի կենդանի շունչ, փչելով դէպ ի նորա երեսը: Հաշվումեն, որ հազար միլիոն մարդիկ մի և նոյն ժամանակին ապրումեն երկրի վերայ և վայելումեն ամենաբարի Ստուծոյ առատութեան սեղանը, բաց ի անբան արարածներից: Այլ աւելի արժանի դիտութեան բան կայ:

Պատճառ, երկրորդ, արեգակը թէև շատ մօտ է երեւում, երբ որ սարերի գագաթից դէպ ի թարմ առ աւօտեան օդը վերուղղում է իւր հայեացքը, այնու ամենայնիւ աւելի քան թէ 20 միլիոն մղոն հեռի է երկրից: Այլ որովհետև աւելի շուտով կարելի էր մի այդպիսի թիւ արտասանել, քան թէ կշռադատել և մտածել, ուրեմն ուշադիր եղիր այս բանիս: Եթէ արեգակի վերայ դրած լինէր մի մեծ, սաստիկ լուսացած թնդանօթի և թնդանօթաձիգը որ նորա յետնակողմում կանգնած էր և ուղղէր նորան, ոչ մի մարդ բայ ի քեզանից չընորէր իւր զարկողութեան նպատակ, սակայն կարելի է քեզ նոյն լսելին, երբ որ թնդանօթը արձակվում է, դեռ եւս աւելորդ վստահութեամբ սկսանել մի նոր տուն շինել քեզ և

---

[1]) Այս բառը բուն թարգմանութիւնն է յունական բառիս պէտքով. այսինքն մի գիծ որ մի բոլորակ մարմնի որ և իցէ կէտից ուղիղ ձգվելով և կենտրոնից անցանելով հասանում է այն կէտի հանգիպակաց տեղին, և այդպէս բոլորակը բաժանում է երկու հաւասար մասն:

[2]) Մի գերմանական մղոն հաւասար է դրեթէ 7 ռուսական վերստ. աւելի ճիշդ խօսելով $6\frac{3}{5}\frac{1}{9}$ վերստ:

կարող էիր երկար ժամանակ նորա մէջ խաղաղութեամբ ուտել խըմել և քնել: Պատճառ, թէև ուռմբը դէպ ուղիղ և միշտ հաւասար արագութեամբ յառաջ և յառաջ թռչէր, այնու ամենայնիւ ոչ յառաջ քան թէ 25 տարուց յետոյ հասանելու էր նա արեգակից մինչև երկիրը. ընդհակառակն մի թնդանօթական ուռմբ ունի շատ սուր ընթացք, և 600 ոտնաչափ տարածութիւն անցանելու համար պիտոյ էր նորան ոչ աւելի քան թէ մինուտի 60 երորդ մասը, այսինքն մի սեկունդ: Ընդհ, թէ արեգակը չէ մի լոկ վայրուն, երկնային լուսամուտի ապակի, այլ, ինչպէս մեր երկիրը, մի կախուն գունդ, հիշատ հասկանալի է դա: Այդ ևս կարող է իւր մոտածութեամբ բովանդակել նորա մեծութիւնը, երբ որ նա այնքան զարհուրելի հեռաւորութենից այդքան լայն և ջերմութիւն թափուկ երկրի վերայ և լցուցանուկ օրհնութեամբ ամենայն բան, որ լուսաւորուկը նորա երեսը:

Արեգակի տրամաչափը 114 անգամ աւելի մեծ է քան թէ երկրի տրամաչափը. բայց նորա մարմնաչափը ունի միլիոն ու կէս աւելի մեծ քանակութիւն քան թէ երկիրը: Ընթէ արեգակը ներսից դատարկ լինէր, ապա տեղաւորվելու էր նորա մէջ ոչ թէ միայն երկիրը, այլև լուսինը որ 50,000 մղոն հեռի է մեզանից, կարող էր, նորա մէջ ուռանց շփելու նորան ելանել և մտանել. այո նա կարող էր երկպատիկ աւելի հեռի լինել մեզանից, և այդպէս հնար էր նորան առանց շփելու արեգակը զբօսնուլ մեր երկրի չորս կողմով, եթէ կամենար: Այնքան ահա մեծ է արեգակը և յառաջացել է նոյն ամենակարող ձեռքից, որ երկրի վերայ կերպարանուկ այն մեծ կոնի (լուշհաշի) հատիկը իւր ամանի մէջ և հաստատուկ նորան. միևնոյն այնքան էլ անհասկանալի, ինչպէս որ միւսը: Պատճառ, եթէ պիտոյ էր մեզ շինել մի արեգակ կամ թէ մի մեկնահատիկ և նորա մէջ մի պղպեղի ծիլ, երկուքը էլ լինելու էին մեզ հաւասարապէս անհնարին:

Երկար ժամանակ կարծուկէին այո և ուսած աստղաբաշխները, որ այս բոլոր անչափելի արեգակնային մարմինը ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ մի աննշին վառուն կրակի գունդ: Միայն թէ ոչ միևնոյնից կարողանում էր հասկանալ, թէ այդ կրակը ո՛ր տեղից առանուկը իւր անհատական մնունդը, որ հազարաւոր և դարձեալ հազարաւոր տարիներով էր նա տաղում և վերջապէս էր հանգչում որպէս մի լապտերիկ:

Ըստ այս պատճառով, մեր օրերումն հաւանական է երևում թէ աստղաբաշխներին և թէ միւս խելացի մարդկերին, որ արեգակը մեր երկրի պէս կարող էր լինել ինքն ըստ ինքեան մի մեծ և ջերմ, այո՛ մի բնակաւոր տիեզերական մարմին: Այդ ինչպէս երկիրս շրջապատած է մի զովացուցիչ օդով, նոյնպէս ուրախացուցիչ լոյսը շրջապատամէ արեգակը, և հարկաւոր չէ, որ այդ լոյսը յատկացուցանէը նոյն իսկ արեգակնային մարմնի մէջ մի անսահմանելի, կորճանողական ջերմութիւն, այլ նորա ճառագայթները ծնուցանեն ջերմութիւն և օրէ այն ժամանակին միայն, երբ որ խառնվում էին երկրային օդի հետ, և ասես թէ այդ ջերմութիւնը դուրս էին քարշում մարմիններէն միջից: Պատճառ, թէ երկիրը արդարև ունի իւր մէջ մի մեծ քանակութիւն ծածկած ջերմութեան և պիտոյ է սպասէր մի շարժառիթի, որ դորան արձակէը իւր միջից, այդ բանը կարելի է ստուգել նորանով, որ երկու պաղ մարմինք ձմերան միջոցին տեղապահս տրորելով միմեանց վերայ կարելի է նախ և յառաջ տալ նոցա ջերմութիւն, ապա օրէ և վերջումը վառումնութիւն. և ինչպէս է լինում, որ ինչքան տեղի վեր է երանում մարդ մի բարձր տարի վերայ, և ինչքան առաւել մօտենում արեգակին, այնքան էս ցուրտ է զգում և վերջապէս ձիւնից ու սառուցից կարող չէր յառաջադէմ լինել իւր ճանապարհի վերայ. այսպէս են հարցանում բնագէտքը, հանդիպելով այն կարծիքին թէ արեգակը մի ջերմաբուղխ կրակ էր:

Պարեմն պիտոյ է շատ կարելի լինի, որ արեգակը ինքն ըստ ինքեան մի ամուր, մեղմ լուսով շրջապատած տիեզերական մարմին էր, և նորա վերայ բոլոր տարին ծաղկումէին գեղեցիկ և անուշահոտ պէոնիայք, և վոխանակ մարդերի բնակումէին այն տեղ հիւղաբարոյ հրէշտակներ և այն տեղ, ինչպէս նոր Երուսաղէմումը, չկար ոչ ղիշեր և ոչ ձմեռն, այլ թագաւորումէր ցերեկ և մի միշտաւոր ուրախալուսաւոր շաբաթ և աւագ տօնի օրեր:

Երբ որ ահա երկրի և արեգակի վերայ ջոկ ջոկ խօսած էինք, այժմ կամինք հաւանօտ տեղեկութիւնք տալ, թէ ինչպէս գոյս սկզբնութենից գոյանումեն օր ու գիշեր, մարտի մանուշակներ, աւտուտ հունձեր, գինի և ստուգապատ տպակիքը մեր լուսամուտների:

Որովհետև անչափելի մեծ արեգակը այդպիսի անչափելի ընդարձակ տարածութեամբ հեռ ակոյ է մեզանից, այդ պատճառով վաղուց արդէն տարակուսելի է եղած աստղաբաշխներին, թէ նա

կարող էր անդադար և քանն ու չորս, քանն ու չորս ժամերվ մէջ պարբ գալ փոքրիկ երկրի չորս կողմով մի անհասկանալի զօրութեամբ և արագութեամբ, որ մեք այս կարճ միջոցումն ստանայինք միանգամ առաւօտ և կէս օր, երեկոյ և գիշեր, այլև թափառական աստղերի տեսութիւն: Պատճառ, բնագէտքը սրտի վկայութեամբ խոստովանած են, որ այդ բոլորը, որ յառաջանումէ, կարող էր յառաջանալ և առելի պարզ ու հեշտ կերպով: Բայց մի ճշմարտասէր աստղագիտակ Կոպերնիկոս անունով ապացուցել է, որ ոչ թէ միայն կարող էր այնպէս պատահել գործը, հնչպէս մտածումն բնաբնիքը, այլ ստուգութեամբ այդպէս պատահումէր և Աստուծոյ իմաստութիւնը առելի վաղ խորհել էր այդ բանի վերայ, քան թէ մարդկայինը:

Նախ, ասումէ Կոպերնիկոսը, թէ արեգակը, այո՛ նոյն իսկ աստղերը չունին ոչինչ շարժողութիւն դէպ ի երկիրը, այլ նոքա մեր համար կանգնած են այնպէս, որպէս թէ դադարուն էին:

Երկրորդ, թէ երկիրը 24 ժամի մէջ պտոյտ ումէ իւր չորս կողմով: Այսմինքն, պատկերացուցէք ձեզ մտքով, որպէս թէ երկրագունդի մի կէսից նորա բուն միջովը դէպ ի հանդիպակաց կէսը ձգած էր մի լուծկ կամ առնակ: Այս երկու կէսերին ասումեն բեւեռ: Որպէս թէ այս առնակի չորս կողմով պտոյտ ումէ երկիրը 24 ժամի մէջ, ոչ թէ դէպ ի արեգակը, այլ արեգակի դէմ ու դէմ, և եթէ մի երկայն կարմիր թել առանց ծայրի, թող ասենք մարտի 12 ին, արեգակից ցած հասանէը դէպ ի երկիր և կէսօրին 12 ժամն կապվէը մի կեռասի ծառի վերայ, ապա երկրագունդը 24 ժամի մէջ այս թելը միանգամ բոլորովին վաթսնըժամ կը լինէը իւր վերայ շուրջանակի, և այսպէս լինելու էր ամենայն օր:

Այսպիսի պարզ կերպով կատարվումէ մի և նոյն բանը, որ պիտոյ է կատարվէը, եթէ արեգակը նոյն ժամանակին մի շրջանագիծ 132 միլեան մեծնի չափ կատարելու էր պինդ կանգուն երկրի չորս կողմով: Այսմինքն երկրագունդի մի կիսաբաժինը դարձուցած է դէպ ի արեգակը և ունի ցերեկ, իսկ միւս կիսաբաժինը բայց է դարձուցած արեգակից դէպ ի աստեղքը, և ունի գիշեր, բայց ոչ մի և նոյնը, այլ երբ որ երկրագունդը իրրև թէ իւր առնակի վերայ պտոյտ ումէ արեգակի հանդէպ, միշտ երկրի խառար կիսամասնի մի եղջումը բաժանվումէ մի փոքր բան գիշերից և խառնվումէ առաւօտեան արշալուսի հետ, մինչև կարելի էր այն տեղ

նկատել արեգակի առաջին ճառագայթները և կարծումեն թէ նա վեր է բարձրանում, բայց լուսաւորված կիսամանի միւս կողմը դնալով դնալով երեկոյանում և հովանում սկսելն, մինչև անյայտանում արեգակը և մարդիկ մոածումեն թէ նա մայր էր մտել, և առաւօտ, կէս օր և երեկոյ, սուրբ ծնոը զատիկ և նորա զանգակներին հնչողութիւնքը թափառումեն 24 ժամի մէջ երկրի չորս կողմով և երբէք երևում չեն ամենայն տեղ նոյն ժամանակին, այլ զոր օրինակ ի Լիսաբոնայում 24 րոպէ աւելի յառաջ քան թէ Փարիզում:

Երրորդ, ասում Կոպերնիկոսը, այն միջոցին երբ որ երկիրը առաւօտ ու երեկոյ և սուրբ զատկի ծնոը 24 ժամի մէջ ասես թէ իւր վերայ պտոյտ եղնում էր, չէ ճիում նա կանգնած մի և նոյն տեղում անշարժելի սիւեղերքի մէջ, այլ անդադար և անխմանալի արագութեամբ շարժվում էր մեծ շրջանառութեամբ արեգակի և աստղերի մէջ տեղումը, և 365 օրի և մօտ 6 ժամի մէջ ճանապարհ կատարելով արեգակի չորս կողմով, դարձեալ հասանում առաջին տեղին:

Ա՛յս պատճառով, և որովհետև 365 օրից ու մօտ 6 ժամից յետոյ բոլորը լինում դարձեալ այնպէս և սահմանում նոն կացութիւնը, ինչպէս նոյնքան ժամանակից յառաջ էր և կար, սորա համար 365 օրը համարումեն մի տարի և աւելորդ 6 ժամերը հաւաքումեն միասին 4 տարի, մինչև նոքա կը բաղկացնէին 24 ժամ: պատճառ, չկայ համարձակութիւն ոչինչ կորուսանել թանգագին ժամանակից. այս պատճառով ամեն մի չորրորդ տարու վերայ յաւելացնումեն մի օր և տասումեն դրան նահանջ տարի:

Բանը սա փոքր փոքր լուսափայլ է դառնալու խելացի ընթերցողի առաջև, և նա սրտի վկայութեամբ խոստովանելու էր թէ այդպէս էր, եթէ նա փոքր ի շատէ հասկացողութիւն սահմանէր երկրագունդի շրջանակութեան և ընթացքի մասին: Ա՛յս պատճառով և

Չորրորդ, ասել է Կոպերնիկոսը, թէ շարժողութիւնը մի գնացական տալն, որի մէջ ինքը մարդը յառաջ է շարժվում, կարելի չէ նոյն իսկ տալն վերայ նկատել երբէք, այլ այդ բանը նկատելի է միայն այն նիւթերի (առարկաների) վերայ, որ կային աչ ու ձախ կողմանը, ծառերի և եկեղեցական աշտարակների վերայ, որ ճիում էին կանգնած, և որոնց մօտից հետ դիտէ անցանումէիր դու տալով: Երբ որ դուք մի մեզմընթաց տալի մէջ, կամ թէ մի նաւակի

մէջ մի գետի վերայ ձմեռապարհուրդումէք և վտակումէք ձեր աչքերը, կամ թէ անդարձ աչքով նայումէք ձեր ընկերի հագուստի կռճակի վերայ, ապա չէք նկատում դուք ձեր հետ գհետէ յառաջխաղացութիւնը: Այլ եթէ դուք դադարումանումէք ձեր հայեացքը դէպ ի այնպիսի առարկայք, որ չէին ձեր մօտ նաւակի մէջ, այնուհետև հետ աւարը հետ գհետէ մօտենում ձեզ և մօտաւոր և աւելի հեռաւորները չքանում ձեր քամակումը և դորանով նկատումէք դուք, որ յառաջ էք շարժվում: Այդ բանը պիտոյ է իմաստասիրել երկրի մասին: Այդ իսկ երկրի և ծովը, նորա վերայ եղած բաների վերայ, ինչքան հեռի կարող էր աչքը նայել, անհատելի է նորա շարժողութիւնը (պատճառ, երկիրը ինքը ամենամեծ շարժական մարմն է, և ամենայն բան որ տեսանվում նորա վերայ որ միում կանգուն և չէ շարժվում նորա հետ միասին). և այդպիսիք էին արդարև արեգակը և աստղերը, ղոր օրինակ կենդանակերպների շրջանակ ասած բանը: Պատճառ, տասերկու մեծ համաստեղութիւնքը, որոնց ասումեն տասերկու Կատեղատունք, դրած են երկնակամարի վերայ և մի բարձր շրջանակի մէջ երկրի չորս կողմով. Անոքա տասվումեն. Խոյ, Ցուլ, Երկուորեակք, Խեցգետին, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Ջուրհոս, Ձկունք:

Արևը հետևումէ միւսի քամակից և վերջինը դարձեալ մօտենումէ առաջինին, այսինքն Ձկունքը Խոյին: Սա է կենդանակերպների շրջանակը. բայց նա զետեղած է աւելի շատ բարձր դրութեամբ երկնակամարի վերայ, քան թէ արեգակը, և սա, եթէ նկատանինք նորան այս տեղից, կանգնած է այն երկու գծերի մէջ, որ նշանակումեն կենդանակերպների շրջանակի եղերքը, և նոցա մի աստղատան մէջ: Պատճառ, թէև արեգակը կանգնած է դէպ ի ցած, այնու ամենայնիւ նորա շատ մեծ հեռաւորութեան պատճառով կարծումեն, թէ նա գտանվումէ նոյն իսկ աստեղատան մէջ: Այլ եթէ նա այսօր գտանվումէ Այծեղջիւրի աստեղատան մէջ, ապա 30 օրից յետոյ կանգնած է նորա աւելի մերձաւոր աստեղատան մէջ և ամեն մի 30 օրից յետոյ տեղափոխվումէ հետևեալ աւաւել մերձաւորի մէջ, և դորանից իմացվումէ, որ երկիրը իւր շրջանառութեան մէջ, այդ միջոցին յառաջ էր գնացել: Այդպէս հարկաւոր է և: Այլև

Հիպսիկրատ և Հուսկ յետոյ աստմէ Կոպերնիկոսը, եթէ այնու ամենայնիւ երկրագունդի լիսեռը դրած լինէր հարթակշիռ դէպ

ի արեգակը, և երկիրը ևս պտոյտվէր այսպէս, և հարթակշիռ, մի կատարեալ բոլորակ շրջաբերական գծով շարժվէր արեգակի չորս կողմով, այնպէս որ արեգակը ունենար իւր դրութիւնը ճշդապէս այն շրջաբերական բոլորակի մէջ, այնուհետև պիտոյ էր բոլոր տարւոյ միջոցին երկրի ամենայն տեղւոյ հաւասար լինէին օր ու գիշեր: Այս, պիտոյ էր երկրի մէջ տեղւոյն, դէպ ի աջ ու ձախ, կարմիր թելի չորս կողմով, թագաւորէր մի միանչենաւոր հրաշալրք առաւն. գորանից աւելի հեռու երկու կողմում, գունդի զատ ի վայրումը, մի փոքր պիտոյ է մեղմանար և հովանար ջերմութիւնը, ինչքան աւելի շեղութեամբ արեգակի ճառագայթները ցած էին թափվում, և աւելի մօտ դէպ ի բևեռքը պիտոյ է տիրէր մի անմխիթար և անվերջ ձմեռն: Բայց այդպէս չէ, ասում աստղաբիտակը: Երկրի լեռները չէ դրած հարթակշիռ և ոչ իսկ ուղղահայեաց դէպ ի արեգակը, այլ շեղապէս մի անկիւնի մէջ որ բաղկացնում է 23½ աստիճան: Այս ուղղութեամբ դէպ ի արեգակը պտոյտվում է երկիրը 24 ժամի մէջ:

Երբ որ մարտի 21 ին ընթերցողը կանգնած էր իւր տան առաջև, երեսը դարձուցած դէպ ի արևելք, ապա այն շրջանակը, որ նոյն օրին կարմիր թելը ձգում է երկրի չորս կողմով, դեռ ևս 1570 ժամի ճանապարհ կամ 785 մղոն ուղիղ դէպ ի աջ հեռի է նորանից. իսկ նորա բևեռը, որին առաւել մօտ էր, 1230 ժամի ճանապարհ կամ 615 մղոն հեռի է նորանից ուղիղ դէպ ի ձախ: Այսպիսի կացութեան մէջ է ընթերցողը մարտի 21 ին: Բայց արդէն 22 ին այն թելը չէ շօշափում բոլորովին այն ծանօթ կեռասի ծառը և նորա սկիզբը, այլ նա մի փոքր կողմնակի վազում է նորա մօտից և այդպէս 24 ժամից մինչև 24 ժամ ողբում է պտուտակի գծով և աւելի մօտենում է մեզ մինչև յունիսի 21ը, բայց և այն ժամանակ չէ նա դեռ ևս մեր մօտ, այլ միայն մօտեցել էր մեզ որպէս թէ 703 ժամի ճանապարհ կամ թէ 352½ մղոն: Բայց ըստ կսկեալ յունիսի 21 ից, թելը նոյն ողբաւութեամբք յետ է դառնում, հետ գհետէ աւելի հեռանալով մեզանից, մինչև նա մօտ 21 սեպտեմբերի հաւասար հեռաւորութեամբ երկու բևեռներից, շատ խոտ կեռասի ծառի մօտից անց է կենում: Կսկեալ այս ժամանակից նա դարձուցանում է դէմքը այն կողմ, դէպ ի միւս բևեռը, հետ գհետէ աւելի հեռանալով մեզանից, մինչև մօտ 21 ին դեկտեմբերի, ուր նա 1440 ժամի ճանապարհ ուղիղ դէպ ի աջ հեռի է մեզանից.

այնուհետև նոյն կերպով վերադառնում դա և 21 մարտի կրկին առաջապէս հանդիպում կեռասի ծառի մօտ: Այլ չէ մօտենում միևչև մեր օթևանը, որովհետև միք շատ հեռի բնակումենք նորա նից, բացակայ դէպ ի բևեռը:

Այս պատկերական խօսուածքից բացայայտ է որդին, որ ընթերցողը երկրի շրջանառութեան միջոցին կարող չէր մնալ մի և նոյն կացութեան մէջ դէպ ի երկիրը· բայց աստղաբիտակը հաշուել են թէ ինչպէս որոշակի գծով երկիրը մի տարու միջոցում պիտոյ է վազէր արեգակի չորս կողմով, որ այս փոփոխութիւնքը և տարու չորս եղանակները յառաջանային:

Գարունը սկսանում մարտի 21 ին, երբ կարմիր թևը ուղիղ ցած է հասանում կեռասի ծառի վերայ· արեգակը հաւասար հեռաւորութեամբ երկու բևեռներից կանգնած է երկրի վերայ· օր ու գիշեր հաւասար են: Արեգակը երևում թէ աւելի մօտենում մեզ և աւելի բարձր վեր է գալիս հորիզոնի վերայ, ինչքան առաջ մօտենում կարմիր թևը: Օրը և ջերմութիւնը յաւելանում, գիշերը և ցուրտը փոքրանում են:

Ամառը սկսանում 21 ին յունիսի, երբ որ թևը առաւել շատ հեռի էր կեռասի ծառից և առաւել մօտ մեզ: Այնուհետև արեգակը առաւել բարձր կանգնած է ընթերցողի գլխի վերայ, և այդ օրը է առաւել երկարը: Այլ երբ որ թևը կրկին բաց է դարձում, այնուհետև արեգակը ստանում օրէ օր աւելի շեղ դիրք դէպ ի մեզ և օրերը կարճանում են:

Աշունը սկսանում սեպտեմբերի 21 ին: Օր ու գիշեր հաւասար են դարձեալ, որովհետև արեգակը, ինչպէս ցուցանում այն թևը, կանգնած է կեռասի ծառի վերայ: Այլ ինչքան աւելի հեռանում նա այն կողմ դէպ ի միւս բևեռը, այնքան էս աւելի խոր ցածանում դէպ ի մեզ արեգակը: Օրերը և ջերմութիւնը հետ կհետ փոքրանում են, գիշերները և ցուրտը առաւելանում:

Ձմեռը սկսանում, երբ որ 20 դեկտեմբերի թևը աւելի շատ դէպ ի այն կողմ հեռացած էր մեզանից: Այնուհետև ընթերցողը քնում առաւել երկարատև գիշերը, և արեգակը կանգնած է այնքան ցած, որ ամբ և ինն ժամի մէջ միայն կարող էր հասուցանել մեզ առաւօտեան ողջոյնը:

Վերջապէս, երբ որ սկսել այս օրից յետ է դառնում թևը, այնուհետև երկարանում են օրերը: Փետրվարի 22 ին սուրբ

Պետրոսի աթոռանստութեան տօնի միջոցին, յետ է գալես սրա-
պիլը դէպ ի իւր հին հայրենիքը և մօտ 20 ին մարտի, վերսին
Հանդիպումի կարմիր թելը կեռասի ծառի մօտ: Այս բանը երկիք
յետ չէ մնացել:

Որանից կարելի է վերահասու լինել միանգամայն, որ բոլոր երկրի վերայ երկիք պատահում չէ մի և նոյն եղանակը: Պատճառ, մի և նոյն ժամանակին և մի և նոյն չափով, երբ և ինչպէս արեգակը հեռանումէր իւր գագաթնակէտից, կամ թէ մեր արեգակից, սա ստանումէ աւելի բարձր կացութիւն նոցա վերայ, որ կեռասի ծառի այն կողմում, դէպ ի միւս բևեռը դուրս բնակումեն, և անդրադարձաբար նոյնպէս:

Երբ որ այս տեղ վերջին ծաղիկները թառամումեն, և տերևները թափվումեն ծառերից, այն տեղ սկսանումէ ամենայն բան կանաչել և ծաղկել: Երբ որ մեր մեր ձմերան մէջ քնումենք առաւել երկար գիշերը, այն տեղ շաղշողումէ առաւել երկար ամառնային օրը, և կարելի չէ ըստ բաւականին զարմանալ Աստուծոյ իմաստութեան վերայ, որ մի հատ արեգակով իւր անտեսութիւնը լուսցաներումէ բոլոր երկրի վերայ և շատ ձմեռնային աշխարհների կարող է տակաւին բերել մի զուարճ գարուն և մի ուրախ հունձ:

Այսքանս բաւական լինի այս անգամ երկրի մասին: Այնու ամենայնիւ եթէ մի մարդ բարձրանալ նորանից և ուղիղ, կամայ կամ արագ կամենալ դէպ ի երեկոյեան աստղը վեր ելանել, որ բոլոր աստղերից առաւել մօտաւորն է, ապա տեսանելու էր նա աւելի հետաքննութեան արժանի բաներ: Աստղը նորա աչքի առաջև հետ գհետ աւելի մեծանալու էր, նախ երևելով որպէս լուսին, ապա որպէս մի մեծ անիւ, ապա որպէս մի գունդ կամ տափարակ, տեսութեամբ անբովանդակելի: Նորա լոյսը հետ գհետ երևելու էր նորան աւելի մեղմ, որովհետև դնալով դնալով տատապածելու էր իւր ճառագայթները աւելի ընդարձակ տափարակի վերայ. այն նա մի որոշեալ հեռաւորութեամբ դադարից, յայտնագործելու էր արդէն սարեր և ձորեր և ամենայն տեսակ բան, և վերջումը դէպ ի յաման դուրս կը գար մի նոր երկրի վերայ: Բայց նոյն համեմատութեամբ, պիտոյ է երկիրը նորա ցածումը հետ գհետ աւելի փոքրանար և նորա լոյսը աւելի փայլուն դառնար, որովհետև դա հետաքրքրումէր մի աւելի փոքրիկ տարածութեան վերայ: Մի որոշեալ հեռաւորութեամբ, երկիրը նորա համար ունենալու էր մի այնպիսի

մեծութիւն, որպէս մի մեծ անիւ, ապա որպէս մի նեռաձգի նապաստակ, ապա որպէս լուսին, և վերջապէս, եթէ ոտք էր կոխել աստղի մէջ, ապա տեսանելու էր երկիրը որպէս մի սխորժելի աստղ ընդարձակ տարածութեան մէջ, երկնակամարի վերայ, որ միւսերի մէջ որպէս ընկեր նոցա հետ ծագումէր և մտանումէր: Տէս ահա, ասելու էր նա այն միւսին որի հետ ծանօթացել էր յառաջագոյն, տես այն սիրուն աստղը. այն տեղ է իմ հայրենական օթևանը, և իմ հայր ու մայրս դեռ ևս ապրումեն այն տեղ: Իմ մայրս այսպիսի և այնպիսի տզդիկ է: Ըղձալիս, որ հիանալի քաղցր հաճոյթիւն պիտոյ է լինի տեսանել, թէ երկիրը երկնքի տատզելի և սիրեհին նոցա նմանելի մէջ ճանապարհ էր կատարում:

Բ. ԼՈՒՍԻՆԸ:

Ընթերցողը այժմ շատ հարցասէր կը լինէր, որ փոքր բան իմանալու և Լուսնի մասին, որ այնքան յաճախ երկոցին առաջնորդումի նորան դէպ իւր օթևանը:

Այս, Լուսինը է մի մեծ գունդ, որ տիեզերքի անսահման տարածութեան մէջ կախված է, ոչ այլապէս քան թէ երկիրը և արեգակը. բայց, եթէ միտ դնենք նորա մարմնաւոր նիւթին, նա չիսուն անգամ աւելի փոքր է քան թէ երկիրը, և ոչ աւելի քան թէ 50,000 մղոն հեռաւոր նորանից:

Երկրորդ, լուսինը երևումէ, որպէս թէ արեգակի պէս ամեն մի քսան ու չորս ժամի մէջ պտոյտ ումէր երկրի չորս կողմով: Այլ դիտոք, թէ նա անշարժ կանգնած էր իւր տեղումն, այնու ամենայնիւ երկիրը պտոյտ ումէ իւր առնակի վերայ. այս իրողութենից հետևումեն լուսնի մասին նոյն տեսիլները, որպիսիք նկատվեցան արեգակի մասին, և եթէ նորանից մի երկար, դեղին թել անճայր ցած հասանէր մինչև երկիրը և նոյնպէս կապվէր կեռասի ծառի վերայ, ապա այն դեղին թելը պիտոյ է նոյնպէս քսան և չորս ժամի մէջ վտիտվէր երկրի վերայ շուրջանակի: Այլ սորանից դեռ ևս կարելի չէ մնակարելել, որպէս թէ լուսինը շրջան էր առել երկրի չորս կողմով, այլ երկիրը շրջանառութեամբ իւր առնակի վերայ, ինքը վտիտվել է իւր վերայ այն թելը:

Երրորդ, լուսինը պիտոյ է նոյնպէս իւր լոյսը և մեռնդը ստանայ արեգակից. նորա գունդի մի կիսապաժինը լուսաւորված է, որ

դարձուցած էր գէպ ի արեգակը. միւս կիսաբաժինը խաւար է: Այն խորհրդով, որ մի և նոյն կիսաբաժինը չմնար միշտ լուսաւոր և մի և նոյնը խաւար, լուսինը, ինչպէս երկիրը, պտոյտ ումէ իւր չորս կողմով, կամ թէ քան և հինն ու կէս օրի մէջ: Երկուքը ևս ուղղ են, ինչպէս կը նայէինք: Այլ թող ասենք քան և հինն ու կէս օրի մէջ, որովհետև օրացոյց շինողները այդպէս են նայում բանի վերայ: Որմանից հետևում է, որ այս երկարատև միջոցում օր ու գիշեր միանգամ միայն թափառումն լուսնի չորս կողմով: Օրը տևում է այն տեղ այնքան երկար, ինչքան գրեթէ երկուքը մեր շաբաթներից, և նոյնքան երկար, գիշերը. և մի գիշերային պահապան լուսնի մէջ պիտոյ է շատ զգուշանայ, որ չսխալվի ժամերի մէջ, երբ որ սկսանում է միանգամ զարկել 223 կամ թէ 309:—Այլ

Ընդդէմ, լուսինը նոյն ժամանակին շարժվում է նոյնպէս և երկրի չորս կողմով: Այս բանս կարելի է դարձեալ տեսանել աստղների վերայ: Օ՞ր օրինակ, երբ որ մի շատ հեռու տեղից նայում է մի ծանրաշարժ սուրհանդակի տոյլի վերայ, կարծում է, որ պէս թէ դադարում էր դա: Այլ երբ որ նկատում է թէ նա գրամանվամբ ոչ միշտ մի և նոյն ծառի մօտ ճանապարհի վերայ, այլ մի քանի րոպէ մի այլ ծառի մօտ, ապա վերահաստատ ենք լինում, որ նա դադարում կանգնած չէ, այլ յառաջագնաց է: Այլ եթէ նա մի մեծ բոլորակով ընթերցողի չորս կողմը մէն առնուր, ապա պիտոյ է նա վերջումը վերադառնար դէպ ի նոյն ծառը, որի մօտ կանգնած էր յառաջուց, և դորանից պիտոյ է հասկանայինք որ նա արդէն կատարել էր իւր շրջանառութիւնը: Այսպէս ևս լուսինը: Դա չէ դադարում ամէն մի գիշեր նոյն աստղիկի մօտ, ինչքան ևս դեղեցիկ լինէը դա, այլ յառաջախաղաց է միևնոյ դէպ ի միւսը: Միւս երևոյթին, նոյն ժամանակին, բաւական շատ յառաջ է գնացել նա, բայց գրեթէ վերադիշեալ ժամանակում, մի փոքր յառաջ դարձեալ յետ է դալիս դէպ ի նոյն աստղը, որի մօտ կանգնած էր յառաջ, և իւր ընթացքը երկրի չորս կողմով լրացել է:

Ընդհերոյտ, որովհետև լուսինը շարժվում է արեգակի չորս կողմով, ապա հեշտ կարելի է դորանից իմանալ թէ ինչպէս էր յառաջանում լուսնի փոփոխութիւնը: Դորագրութիւն կամ լուսնի ծնունդը այն է, երբ որ լուսինը կանգնած է արեգակի և երկրի մէջ, բայց մի փոքր բարձր կամ ցած: Այնուհետև, նորա բոլոր լուսաւորված կիսաբաժինը, կամ թէ նորա տեսակը դարձուցած է դէպ

ի արեգակը, և նորա գիշերը ցած է նայում մեր վերայ: Ակսում նորալուսնից, երբ որ լուսինը իւր շրջանաւութեան մէջ արեգակի ու երկրի մէջ դուրս է գալիս և ընդունում մի կայութիւն որ ձեւաւորումէր որպէս թէ մի եռանկիւն նոցա հետ միասին, այնուհետև տեսանում ենք նախ մի նեղ շերտ լուսաւորված լուսնագունդից, որ գնալով գնալով աւելի մեծանում մինչև առաջին քառորդը:

Առաջին քառորդը այն է, երբ որ լուսինը այնպէս է կանգնած, որ կիսամասը լուսաւորված լուսնագունդի, կամ թէ չորրորդ մասը լուսնի լուսաւոր է դէպ ի մեզ, և կիսամասը խաւարված լուսագունդի դրած է ստուերի մէջ: Ահա այդ տեղ կարելի է տեսանել, թէ ինչպէս Աստուած լոյսը խաւարից բաժանումէ, և ինչպէս սիեղերական մարմիններին մէջ բնակում ցերեկը գիշերի մօտ, և թէ ինչպէս առ փոքր փոքր յաղթահարվումէր գիշերը ցերեկից, նորալուսնի ձեռքով:

Լուսնի լրութիւնը այն է, երբ որ լուսինը իւր շրջանաւութեան մէջ երկրի չորս կողմով, կանգնած է երկրի քամակում, ուրեմն այնպէս, որ երկիրը կախված է նորա և արեգակի մէջ աստղերում, բայց մի փոքր աւելի լոր կամ բարձր: Այնուհետև կարող ենք տեսանել նորա բոլոր լուսաւորված կիսամասը, ինչպէս նա լինում լուսազարդվումէ արեգակից, և մեր գիշերից վեր նայել դէպ ի ցերեկ: Ակսում լուսնի լրութենից, երբ լուսինը դարձեալ միւս կողմանը շեղվումէ շրջվելով դէպ ի երկիրը, վերսին երեւումէ մի փոքր բան նորա խաւար կիսամասնից և գնալով գնալով յառնումէ դա մինչև վերջին քառորդը:

Վերջին քառորդը այն է, երբ դարձեալ մի կիսամասը լուսնագունդի, որ դարձուցած էր դէպ ի մեզ, լուսաւորված է, բայց միւս կիսամասը խաւարված է, և այնուհետև կարելի է տեսանել թէ ինչպէս գիշերը յաղթումէր ցերեկին, մինչև որ նորան նորալուսնի մէջ դարձեալ կուլ կը տար: Այս է ահա լուսնի փոփոխութիւնը:

Բայց վեցերորդ, երբ որ լուսինը և երկիրը միանգամ դէպուղիղ հայեացքով կանգնած են արեգակի առաջև, այնուհետև յառաջանումեն ամենևին այլ բաներ, որ չէ կարելի ամենայն օր տեսանել, այսինքն խաւարումնք: Երբ որ մի այլ նորալուսինը երբեմն իւր ընթացքի մէջ ներս է մտանում երկրի և արեգակի մէջ, և ունի այնպիսի կացութիւն որ ոչ աւելի բարձր և ոչ աւելի ցած է,

այնուհետև պայծառ ցերեկով կարող չենք տեսանել արեգակը, կամ թէ ոչ կատարելապէս, և այս է արեգակի խաւարումը, որ կարող է միայն պատահել նորալուսնի մէջ: Այլ երբ որ լուսնի լուսան միջոցին երկիրը դէպ ուղիղ ներս է մտանում արեգակի և երկրի մէջ, ընդունելով մի կացութիւն որ ոչ աւելի բարձր և ոչ աւելի խոր է, այնուհետև կարող չէ արեգակը լիովին ներս փայլել լուսնի լուսթեան մէջ, որովհետև երկիրը խափանարիւս է նորա ճառագայթներին. այս է լուսնի խաւարումը, որ կարող է լինել մանաւոր և բոլորովին: Ահա մեծութիւնը, որ մեք տեսանում ենք լուսնի մէջ, չէ մի այլ բան, եթէ ոչ մեր յատուկ երկրի ստուերը, և մի այդպիսի օրինակ կարող է ցուցանվել միայն լուսնի լուսթեան մէջ: Ահա բոլոր խաւարմունքը ահա, որ յատկանում են լուսնի և երկրի շարժողութենից միայն, զիտեն աստղագիտակերը և օրա- ցոյց շինողները մի ամբողջ տարի յառաջ, այո կարող էին, եթէ հարկաւոր լինէր, աւելի շատ տարիք յառաջ նախագուշակել: Եւ եթէ մի մարդ հարցանէ նոցանից. ո՛ր տեղից գիտէք դուք, թէ ա- րեգակը և լուսինը այդպէս մեծ են, կամ թէ այսքան և այնքան հեռի երկրից, կամ թէ մեր նորան և թէ երկիրը և լուսինը ամե- նևին ստուգապէս շարժվում էին այդպէս, ինչպէս երևում էր ձեզ- ով է եղել այն տեղ կամ թէ չափել է դորան — ապա իրաւացի պատասխանելու են նորա այսպէս: Եթէ մեք չհամաձայնինք այդ բանը ստուգութեամբ և մանաւանդ ճշդութեամբ, ապա կարող չէինք մի ամբողջ տարի յառաջ, այո, եթէ պահանջէին, շատ տարիներ յառաջ նախագուշակել մի խաւարումը, յատկացնելով թէ ինչ օրում, այո ինչ րոպէում լինելու էր այդ դիպուածը, կամ թէ այդ խաւարումը որ չափով պատահելու էր լուսնի կամ արեգակի մէջ:

Նօթինղոմ, երբ որ լուսինը իւր լիակատար պայծառու- թեամբ երևում է երկնակամարի վերայ, այնու ամենայնիւ ցուցա- նում նա մի օտարոտի կերպարանք իւր պղտոր երեսով և իւր պայ- ծառ ու դունատ բիծերով: Պատճառ, ինչպէս յայտնի է, լուսա- պայծառութիւնը տարածված է նորա վերայ ոչ հաւասարապէս, այլ անհաւասար կերպով: Պատանով, լուսինը երկար ժամանակ զայրացուցել է աստղաբնականները և խաբէութեամբ հաւատացու- ցել է նոցա, որպէս թէ աւելի պայծառ բաժինները էին ցամաքա- հող, որից դարձեալ յետ էին արձակվում լուսի ճառագայթները, և աւելի մեռած բաժինները էին ջուր, որ կուլ էր տալիս լուսի ճա-

ոտպյմինելը: Այսպ.մի պատշաճաւոր հետացոյց ասլակիով, որ-
պիսիք չկային առաջին ժամանակներուն, մի բարեպաշտ աստղա-
դիտակ, Շ. լեօդլը անունով, տեսած է լուսնի վերայ ամենևին այլ
բաներ, քան թէ ցամաքահող և ջուր. այո՛ և ցամաքահող, բայց
ոչ ջուր, այլ ընդարձակ դաշտեր, բարձր սարեր և խոր անդունդ-
ներ զարմանալի կերպարանքով և կազակցութեամբ: Կրնանէ չէ՞ նա
միևնէ նոցա սառեալը անգամ, և թէ նա ինչպէս շարժվելէն սրև-
մուտքեն դեպ ի արևելք, կարճանալէն և երկարանալէն: Հաշ-
ուել չէ՞ նա այո և սարերի սառուներնեէն, նոցա բարձրութիւնը,
որպէս մի օրինակ այն թուաբանական կանոնի որ ասվամբ Կան-
նը դե Տրի: Ամենաբարձր սարերը լուսնի վերայ աւելի բարձր են
քան թէ առաւել բարձր սարերը երկրի վերայ որ 25,000 ոտնա-
չափ են: Արդս ուսանելէ պատկառանքով յարդել աստղադի-
տակ մարդու հանճարը և ահով ու դողութեամբ պաշտել Աստու-
ծոյ ամենակալողութիւնը որ մի տկար ագամորդու ընծրհել է այն
խնդյականութիւնը որով կարող է նա 50,000 մղոն հեռաւոր սա-
րեր չափել և իմանալ նոցա մեծութիւնը, սարեր որ ոչ միայն մե-
զանէց տեսանել ևս կարող չէ: Այլև, եթէ հարցանէինք

Ա. Թելորդ և վերջապէս, թէ ինչ էր իսկապէս այն գործը որ
լուսինը երկնակամարի վերայ ունէր լուսցանելու: — Պատասխանի.
Նոյն գործը, ինչ որ լուսցանումէ երկիրը: — Այսքանս անտարակոյս
է, որ նա իւր մեզմ փայլողութեամբ լուսաւորումէ մեր գիշերները և
հակումէ որ ամենայն բան գիշերի մէջ կատրով ընթանայ: Նա է
սիրապէս ընտանի բարեկամը և առաջին օրացոյց շինողը մեր երկրի
և ծայրագոյն ընդհանուր պահապանը, երբ միւսերը քնած էին:
Նորա փոխանակ երկիրը իւր արեգակնային պայծառութեամբ, փո-
փոխական լուսով փայլումէ լուսնի խաւար կիսագունդի մեռ և լու-
սաւորումէ նորա երկար ու ձիգ գիշերը: Ինչ կամիք ասել սորան:
Մի՞ թէ տեսանումէ չենք նորալուսնի առաջին օրերումը, երբ որ
լուսինը տակաւին որպէս մի կորացած մանգաղ երևումէ երկնակա-
մարի վերայ, մի՞ թէ տեսանումէ չենք և նորա բոլորակի մնացեալ մա-
սը կամ թէ նորա գիշերը, որ պայծառացած էր մի թոյլ կանաչա-
յին նշոյլով. դա է ապացոյցութիւնը արեգակնային փայլողութեան
որ մեր երկրի լուսաւորված կիսագունդից ընկնումէ լուսնի վերայ,
կամ թէ երկրի փայլողութիւնը լուսնի մէջ:

Ս. Ա-ԵՓԻԵԱՆՑ:

(Շարունակութիւնը յետոյ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՒԳՍՏՈՍԻ։

ԻՍԱՆ.

(Մահմետական հատուած.)

Երբեմն աշխարհը շփոթուած էր Հռոմէական թագաւորութեան, և բազմաստուածութեան անկմամբ, և ահա յայտնուեցաւ Մահմետը հիմնադիր մի նոր հաւատի և նոր կարգուածութեան։ Եթէ պատկերացնենք մեր առաջև այն հանգամանքը, որոնց մէջ գտանվումէր նա, և կշռենք այն դժուարութիւնները որոնց հանդիպած է նա իւր ամեն մի քայլափոխում, ապա երևումէ նա աւելի բարձրապատիւ քան թէ Օրդաւշալը և Պոնֆուչիոսը, եթէ ոչ հանճարով, գոնեայ պատմութեամբ։ Ընդ ժամանակամիջոցին, երբ նորա հայրենակիցների հոգիքը ոչինչ յօժարութիւն չունէին դէպ ի նորանոր կարգերի ներքսածութիւնք, առանձնակեաց Մահմետը համարձակուեցաւ խոկոյն յղանալ իւր մէջ և յառաջ տանել մի առաջարկութիւն որի լոկ մտածութիւնը անդամ կարող էր զարհուրանք բերել ամենավստահ յեղակերպող մարդու վերայ — մի այնպիսի առաջարկութիւն որ էր, ցած կործանել ոգքի վերայ եղած կարգերը, վերանորոգել ազգային բարքուվարքը, վեր ի վայր առնել բոլորը և առնուլ տանել իւր հետ, և վերջումը յայտնել իւր անձը Երաբացոց իբրև մարգարէ, օրէնստու և թագաւոր։ Նորութեան կռիւը հնութեան հետ, միշտ զարհուրելի է լինում, մանաւանդ այն ազգերի մէջ, ուր արմատացած են կանխահաստատ դաւտոզութիւնք. ուրեմն ինչպէս պէտք է լինէր այդ կռիւը Երաբիայում, ուր թէպէտ բնակութիւնին վաստուն հրեականութեամբ թափառական ազգեր, սակայն թագաւորութիւնէր հոգիների վերայ մի բոլորովին անապաշտութիւն, որ և պատրաստ էր կայծակին նման ձայթելու այդ յանդուգն նորատկերպողի վերայ։ Բայց Մահմետը յաղթեց այդ բոլոր դժուարութիւններին։ Ընդհայում հնուց կային

երկք փիլիսոփայական ուսումնասիրութիւն (սիստեմայք)։ Առջոց, Հնդկացոց և Չինեացոց, և ամէն մինը այդ սիստեմայքից հիմնուած էր մի գլխաւոր գաղափարի (իդէայի) վերայ։ Բոլոր Ասիայի կրօնները ծագեցան նոցա տեսակ տեսակ զուգաւորութիւնից։ Առջոց սիստեման ունէր մեծագոյն նախապատուութիւն միւսներից. նա փոխ էր առել միոյ միայնոյ Աստուծոյ ըմբռնումը Եփրայեցոց ազգից։ Այս ըմբռնողութիւնը մեծապէս մտայղացել բարբինների անձնահաճ մեկնաբանութեամբ և զանազան աղանդների յառաջացնելով, որ կային այն ժամանակ Ասորեստանի և Պարսկաստանի մէջ եօթներորդ դարու սկզբում, կերպարանվեցաւ որպէս մահմետականութիւն։ Այժմ յառաջ քան թէ կը պատմենք Մահմետի կեանքը և կ'աւանդենք նորա կրօնի իսկութիւնը, թող խօսենք Արեւելեան աշխարհի կրօնական հաւատոյքի վերայ որ վերաբերվում են դէպ ի զանազան անձինք և մարդարէք Աստուածաշնչի մէջ։ Մահմետականք խոստովանում են բարի և չար հրեշտակներ. առաջինն կարգումը նախապատում են Աստուծոյ յանդիման եղած հրեշտակներ, այսինքն Գաբրիէլ, Միքայէլ, Ազրայիլ և Ազրաքիլ։ Գաբրիէլն է Աստուծոյ պատգամաբերը, Միքայէլը հրամայում տարերքին, Ազրայիլը ընդունում մարդերի հոգիքը և ասվում նահատակ հրեշտակ և վերջապէս Ազրաքիլը պահում երկնքի փողը, որ պէտք է հնչէ աշխարհի վերջումը։ Մահմետականք առնում սիրում Գաբրիէլին, որովհետև ասում են նորա թէ այս հրեշտակն եղած է ճշմարիտ նախանձաւոր Իսլամական հաւատի և տալիս էր Մահմետին բոլոր աստուածային յայտնութիւնները, որոնցից և կազմեցաւ Ղուրանը։ Առաջ նշանաւորը չար հրեշտակների մէջ է Իբլիսը, որ քարերով ցած է կործանված երկնքից, ըստ որում ապստամբված էր ամենաբարձրեալ Աստուծուց։ Ադամի ստեղծագործութեան մասին արևելեան աշխարհում կան զանազան ասանդութիւններ, առջի ընդհանուրը նոցանից է այն, որ ասում են թէ Ադամը շինած էր կաւից և չորանալով 40 տարի, կենդանագործվեցաւ յետոյ Աստուծուց։ Նա մեծարվում իբրև մարգարէ, որովհետև ստացաւ ասան դիրք յայտնութեան։ Անունները Աբէթ, Նոյէ, Նոյի և Աբահի նմանապէս յայտնի են Մահմետականներին իբրև մարգարէականք։ Աբրահամից (Իբրահիմից) սկսվում նոր դարապրնս, որովհետև նորա որդի Իսմայէլը համարվում հայր Արաբացոց և Արաբայի շինող։ Մահմետը մեծ յարգանքով խօս-

սումէ Աբրահամի հաւատի վերայ. այդ է միևը նորա արտաքսման հնարներից, որով կամենում էր նա հաւատացնել թէ իւր քարոզած կրօնը չէ մի նոր բան, և դորան դաւանել են նոյն իսկ մարգարէքը: Յովսէփը (Դաւիթ) և Մովսէսը (Մուսա) շատ մեծարվում են արևելեան կողմերումը. Մահմետը նուիրել է առաջինին մի ամբողջ (12) գլուխ Ղուրանի, ուր պատմում նորա կեցուվիճակը Եգիպտոսի մէջ: Աստուածային սաղմոսերգու Դաւիթը նոյնպէս հռչակուած է մահմետականների մէջ, ինչպէս մեր մէջ. նորա սաղմոսքը համարվում են աստուածային ներշնչութիւնք, և Աբրահամից կարծում են թէ նորա ձայնը զուարճացնում էր թռչուններին, շարժում էր երկաթը և դաշտի հետ հաւասարում էր սարերը. երբ որ նա փառաբանում էր Աստուած, բնութիւնը ձայնակից էր լինում դորա մէջ: Սողոմոն (Սուլէյման) իմաստունի անունը համարվում օրինակ ամենայն մեծութեան երկրիս վերայ, այսինքն ամենայն ճոխացիւս և զարմանալի բանի, ինչ որ միայն Աբրահամոց երևակայութիւնը կարող էր հնարատուել: Մահմետականք շատ մեծարում են Յաքոբին և նորա որդի Յովհաննէս Մկրտիչը և համաձայն են այն պատմութեանը, թէ նա վարել է մի խիստ կեանք և մեռել է բռնատրական մահով: Ասլէ, մի քանիքը նոցանից ուսուցանում են լինում դէպ ի Դամասկոս, ուր նոցա կարծիքով կան Յովհաննէս կարապետի մնացուքը:

Մուսուլմանքը խոստովանում են Քրիստոսի բոլոր հրաշագործութիւնքը որ յիշատակվում են աւետարանի մէջ և ցուցանում խորին յարգանք դէպ ի նորա վարդապետութիւնը: Շատերը գարվիշներից քաղում են աւետարանից, և մանաւանդ Յիսուս Քրիստոսի կեանքից նիւթ շինողական ճառեր որ ասվում են մահմետական վանքերի մէջ: Ուշադրութեան արժանի է այն իրողութիւնը, որ 1526 թուին Տաճկաստանի մէջ Պաբիզ-Նֆին-դին հրապարակաւ ջատագով եղաւ Քրիստոնէական կրօնին, հանդէս հանելով Ղուրանի բոլոր սխալները և հակառակաբանութիւնքը, և ապացուցանելով թէ ճշմարիտ ուղղահաւատութիւնը գտանվում աւետարանական օրէնքի մէջ: Նորա հակառակորդքը վիպասութիւններով Ղուրանից, որ համարվում են այնպէս ճշմարիտ, ինչպէս Ալլահն է, հերքեցին նորան, և նա դատապարտեցաւ մահով: Երկոտասան աւաքեաներից (և մանաւանդ սուրբ Պաւղոսը) և ամենեքեան նորա որ դործակից են եղել սպասածելոց Քրիստոնէ-

ութիւնը յարգվումեն Ա՛ստուածներուն մէջ։ Նոքա չեն խոստովանում ոչինչ մարգարէք մինչև Ա՛ահմետը։

Ա՛ահմետը, կամ, ինչպէս Աբրահիմիք անուանումեն նորան, Ա՛ուհամմետը, ծնաւ 569 թուին Քրիստոսից յետոյ։ Նա շառաւիղը էր Հաշեմեան ցեղից, որ ունէր իւր ծագումը Աբրահիմի մէջ հռչակաւոր Կորէյշեան ազգից։ Ի՛ր ժամանակ Աբրահան աւելի մեծ մասով պատկանում էր այլազգիների։ Արևելեան կայսրները, Պարսից և Հաբէշստանի թագաւորները ջենքով գրաւել էին արաբական կիսակղզու գաւառների մեծ մասը։ Միայն Ա՛էքքա քաղաքը և նորքին սահմանքը աշխարհի պահպանել էին իւրեանց ազատութիւնը. Ա՛էքքան համարվումէր Աբրահիմի առաջին և սուրբ քաղաքը, թէ իւր մեծահշտութեան պատճառով, թէ այն խորհրդով, որ նորա մէջ գտնվումէր հին արաբական սրբութիւնը Քաբա։ Հասկնալի է, որ այնչափ զանազան ազգերի տիրապետութիւնը ունէր Աբրահիմի վերայ մեծ ներգործութիւն։ Հպատակ գաւառքը Հովմայեցւոց և Հաբէշացոց իշխանութեան լծուած էին երկոցեքի և քրիստոնեայ ազգերով, մինչ տարբապաշտութիւնը (Պաթպիսմ) և մոգերի կրօնը տարածուած էին Պարսկաստանին պատկանած գաւառներում։ Միւսերը, որպէս և Ա՛էքքան հեռուումէին կառավարական ծէսերի։ Քաբայի մէջ կային Աբրահամի և Իսմայէլի արձանները և բաց ի սոցանից այլևս 360 ուրիշ արձաններ, որոնց ամեն մինը որոշված էր որպէս պաշտելի կուռք տարու ամեն մի օրի համար։ Մի քանիքը նոցանից պատկերացնումէին հրեշտակներ, միւսերը մարդակներ և աստղներ, ամեն մինը սոցանից ունէր առանձին պաշտօն, իւր երկրպագողքը և իւր զոհերը, որովհետև ամեն մի գերդաստան կարող էր ընտրել իւր համար մի առանձին աստուածութիւն, ինչպէս կամէր։ Ա՛ահմետը ծնաւ կառավարութեան մէջ — արդէն փոքր հասակում որբացաւ նա իւր հայր Աբդալլահից և իւր մայր Ամինէից. ծնողները թողել էին նորան որպէս ժառանգութիւն 5 ուղտ և մի շէկ աչքով ծառայ։ Սորա հօրեղբայր Աբութալէբը, ընդունեց Ա՛ահմետին իւր տունն և գործ էր ածում նորան վաճառականութեան մէջ։ Տասերեքամեայ հասակում Ա՛ահմետը կատարեց նորա հետ առաջին ճանապարհորդութիւնը դէպ ի Սորեստան։ Ա՛էքքայի բնակիչքը այն ժամանակ վարումէին մեծ առուտուրք, բայց աղքատութիւնը պզտկատիճ էր որը Ա՛ահմետի յառաջադիմութեան։ Մի Ա՛էք-

քացի հարստական այրի կին, Պաղինչէ անուն, յանձն առաւ անհետ կացուցանել այդ դժուարութիւնը և յանձնեց նորան իւր վաճառական գործերի կառավարութիւնը, իսկ յետոյ ամուսնացաւ նորա հետ. այս այրի կինը էր արդէն քառասնամեայ, իսկ Մահմետը քսան և հինգամեայ: Մահմետը որպէս տէր մի ահագին հարստութեան սկսաւ մտածել կրօնի վերանորոգութեան վերայ: Նորա իմացականութիւնը կրթուած էր յաճախ ճանապարհորդութիւնների մէջ. այն աստուածպաշտական հանդէսքը որոնց ականատես էր եղած նա Նբրայեցոց և Քրիստոնէից մէջ, պէտք է իւրեանց փառահեղութեամբ զարմացք բերած լինէին նորա վերայ: Հրէայք և Քրիստոնեայք միայն մերժումէին կատարելութիւնը և խոստովանումէին մի Աստուած: Խորհրդավելով նոցա պատմութեամբք և լսելով հին և նոր կտակարանի բաները, Մահմետը իւր կուրծ թեան մէջ, հաստատուց մտքումը ինքն լինել մարգարէ. թէպետև չէր կասկածում նա բոլորովին օրինակ առնուլ միայնակ ճշմարիտ քրիստոնէական կրօնը, սակայն փոխ առաւ շատերը քրիստոնէական ծէսերից: Յայտնի չէ թէ Մահմետը ինչպէս է անցուցել իւր ասպարէզի յառաջընթաց միջոցը. դիտենք միայն, որ նա ամէն տարի հեռանումէր դէպ ի Մէք քսայի մօտակայ մի քարայր, որ այս տեղ առանձնութեան մէջ մտածէ աստուածային նիւթերի վերայ: Նա չգիտէր ոչ գրել և ոչ կարդալ, և գուցէ թէ համարումէր այդպէս ևս հարկաւոր, իւր դիտաւորութիւնը յառաջ տանելու համար. նա կարող էր պնդել, թէ նորա մարգարէութիւնքը չէին ծնունդ մարդկային խելքի, ըստ որում ինքը անկիրթ մարդ էր — թէ նորա խօսքերը պէտք է ընդունվին ոչ այլապէս, եթէ ոչ որպէս աստուածային ազդեցութիւն, ուղարկված ի վերուստ: Վերջապէս Մահմետի կարծիքական առաքելութիւնը կատարուեցաւ: Մի օր, երբ նա քայլայրումն էր, նորան երևեցաւ (այսպէս պատմումէ ստուա մարդպէն) Գաբրիել հրեշտակը և ցոյց տալով նորան երկնքից բերած յայտնութիւնները, ողջունեց նորան Աստուծոյ պատգամաւորի անունով. Մահմետը իսկոյն յետ դարձաւ դէպ ի տուն և մանուկից սրեց իւր խորհուրդին Պաղինչէն, որ և հաւատաց նորան: Պաղինչէի օրինակին հետևեցան Ալին, Աբուբաքերի որդին և Աբուբէքրը: Շուտով նոր կրօնը իւր հետևողների շարքում ունէր Օսմանը և ուրիշ երևելի անձինք. բոլոր նորադարձքը ստացան անունս մուսուլմանք (իսկապէս մուսլիմք, բառ արաբական,

որ կամի ասել «Աստուածն յանձն եղած, այսինքն ուղղահաւատ»: Մահմետը կարդացրելով հաւատոյ կանոնները, զօրութիւն էր տալիս իւր հետևողների ջերմեռանդութեանը նոր նոր յայտնութիւններով որ, ինչպես ասում էր նա, միջոց առ միջոց ստանում էր երկնաւոր: Ընդհան ուրեմն երեք տարի, բայց Խալամը մնում էր դեռ ևս ծածուկ: Սուտ մարգարէն հայկերութեան հրաւիրեց իւր ազգականները որ դեռ ևս կռապաշտ էին, և ցոյց տալով նոցա անցած օրերի մեղքութիւնքը, սա աջարկեց նոցա ընդունել իւր հիմնարկած կրօնը. սակաւք նոցանից ընդունեցին այդ առաջարկութիւնը, բայց միւսերը համարեցին Մահմետին խելացնոր և խրատ էին տալիս նորան հանդիստ մնալ և շարունակել իւր վաճառականութիւնը: Նորա խոստովանողների մէջ երևելիք էին իւր հօրեղբայր Համզան և Օմարը, որ յետոյ ժամանակում դարձաւ խալիֆ: Բայց քանի որ ընդարձակվում էր Մահմետի իշխանութիւնը, այնքան և սատկանում էր նորա թշնամիների ատելութիւնը: Հակառակ կողմի գլխաւորը էր Աբու Սուֆիան, Մէքքայի աղնուական, որ պատկանում էր Կորէշեան ազգատոհմին, միայն թէ այն ճիւղատոհմը, որ թշնամի էր Մահմետին, այսինքն Օմայեանցը, առաջ անվաստակելի հալածողը նորա կերպով և ջերմութեամբ պաշտպանողը իւր նախնական հաւատի, այսինքն կռապաշտութեան: Կրօնական վէճերը վերջանում էին յաճախ կռւով և ծեծով, և Մահմետը դադարեցրեց իւր գործունութեան արագութիւնը, սպասելով մի աւելի յարմարաւոր ժամանակի: Դա շուտով վերայ հասաւ այն միջոցին, երբ որ եկել էին Մէքքա ուխտաւորք, Երաբիայի ամենայն մասներից, որոնց մէջ յոյս ունէր Մահմետը տարածել իւր ուսումը: Այս ուխտաւորների թուում կային նամանաւանդ մի քանի կռապաշտք Մեդինա քաղաքից: Սորա անդադար լսելով նոր մարգարէի մասին, կարծում էին գուցէ սա էր նոյն ինքը որի գալստեան սպասում էին Հրէայեցիք — այսինքն Մեսիան, և գնացին տեսնելու նորան: Մահմետը կարդալով նոցա մի քանի գլուխ Ղուրանից, համոզեց նորանց ընդունել Խալամական հաւատը. այնպէս որ սորա դարձան նորա ամենաջերմ հետևողքը և վերադառնալով դէպ ի Մեդինա, սկսան քարոզել ընկերաց ուսումը. և գործը այնպէս յաջողակ գնաց, որ կարճ միջոցում տարածվեցաւ նոր կրօնը Մեդինայի մէջ, գրեթէ ոչ մի կռապաշտ չմնայով այն տեղ: Ասպիսի անակնկալ յաջողութիւն այնքան ևս հա-

մարձակութիւն տուեց Մահմետին, ինչքան որ սրանից յառաջ երկչոտ էր։ Մինչև այն ժամանակը նորան հաճարուքին անկարող դործելու հրաշք, ի զուր խնդրուքին նորա հակառակորդքը հրաշք իրրև ապացոյց նորա առաքելութեան. Մահմետը հնրիքանումբ ձայնատար ու յաջողակ պատասխանատուութեամբք։ Այսց այժմ ստանալով զօրեղ կողմնաւորք Մեդինայի մէջ, վառահացաւ աներկիւղ քարոզել իւր անձը ամենևին հաւասար հին նահապետների և մարգարէների։ Սա կամենաւմբ գործել մի հրաշք, որ նեմանդնէր բոլոր միևնչև այն ժամանակ յայտնի հրաշքերը. և այս խորհրդով հնարաստեղծեց նա իւր դիշերային ուղևորութիւնը եօթներորդ երկինք (Ղրանում) դէպի Ամենաբարձրելու աթոռը — մի ուղևորութիւն որ իրրև թէ կատարել էր յաւիտեան ալարդ և գոհարեղէն կամարների միջով. թէպէտ հաւատում չէին նորա օտարամիտ պատմութեանը, սակայն Խալամը տարածվեցաւ Մեդինայից բոլոր Արաբիայի մէջ։

Մինչ դեռ Մահմետի հետևողքը փոքրաթիւ էին, չափաւորութեամբ նա նոցա մոլեկրօնութիւնը, բայց երբ շատացան, ապա փոխեց Մահմետը իւր մտածութեան կերպը, ասելով, թէ Աստուած հրամայում է մուսուլմաններին պատերազմել յանուն կրօնի, պաշտպանել նոր մարգարէին և վրէժխնդիր լինել նոցա, որ անարգել էին նորան։

Մահմետը, կամենալով առաւել ևս բորբոքել իւր դաւանողների քաջութիւնը, հաւատացնում էր, թէ նոքա, որ կը պատերազմեն նորա համար, կը մտանեն եօթներորդ երկինք, ուր սպասում են նոցա Հուրիք (անապականելի կուսութեամբ աղջիկներ), թէ նոցա վէրքերը կը փայլեն ծիրանի ներկով և կը բուրեն անուշահոտութիւն որպէս մուշկ, թէ նոցա բաց կտրած ձեռների տեղում կը բուսանին հրեշտակների թևեր և այլն։ Մոլեգնութիւնը հաւատ միևնչև մի անհաւատալի աստիճան։ Մէքքայի մեծատունները ահաբեկ լինելով, որոշեցին սպանել Մահմետին, յուսալով այսպէս դադարեցնել խռովութիւնը, որ սկսել էր ահա։ Մահմետը իմանալով վտանգը, մի քանի աշակերտներով փախաւ դէպ ի Մեդինա։ Այս օրը (19 յունիսի 622 թուական, որ ասվում է Հիջրէթ, այսինքն փախուստ), հռչակաւոր է Խալամի տարեգրութիւնների մէջ, և բոլոր մուսուլմանական ազգերը այդ օրից սկսում են իւրեանց ժամանակահաշուութիւնը։ Փախստականը ընդունեցին Մեդինայում մեծ հան-

դիսով, մանաւանդ որ հետամուտքը, որ ուզարկել էր Աբու Սուֆիանը, չհասան նորան: Մահմետը հասանելով լեակատար հոգևոր և քաղաքական իշխանութեան, ամրացրեց իւր կարողութեան հիմքը, կարգադրելով անփոփոխելի ձևեր մուսլիմական ատուածապաշտութեան:

Հաւելեալ տարուայ մի փոքր ղօլքով (որ բաղկանում էր 319 մարդից) գնաց Մեքքայի վերայ: Պատերազմ բացուեցաւ Խադրանի ձորում, որ գտանվում Մեքքայի և Մեդինայի միջոցում: Թէպէտ և թիւնամին բազմաթիւ էր, բայց առաջին յաղթութիւնը ստացվեցաւ իսլամական հաւատի համար: Այդ յաղթութիւնը ոչ թէ երևելի էր իւր բազմաթիւ կոտորածով, այլ իւր հետևանքով, որովհետև դորանով Մահմետը գրաւեց դէպ ի իւր կողմ բազում կուապաշտներ: Այդ անցքը յաձախ յիշատակվում Կուրանի մէջ իբրև մի աստուածային օգնութիւն, որ գտել էր ճշմարիտ գործը: Հաստ ձգնողութիւններից յետոյ Մահմետը Հիջրեթի 8 թուական (630 ին) տիրապետեց Մեքքային. կուռքերը ջարդուփշուր եղան, և Աբու Սուֆիանը ընդունեց Իսլամը: Մահմետը այնուհետև գտանվում իւր փառքի ամենավերին աստիճանի վերայ. Արաբիայի բոլոր ազգերը հնազանդուեցան նորան. նա խլեց Հրեաներից նոցա պատկանեալ գաւառները և Հորեստանը: Ամն նամակներին մէջ որ գրել է նա զանազան իշխողներին, յորդորելով նորանց ընդունել իւր ուսումը, անուանուում էր իւր անձը Աստուծոյ պատգամատար և գնում էր իւր անունը առաջին տեղում: Ամենայն բան դուշակուում էր իսլամական հաւատին մի ապագայ մեծութիւն. շատ բաներ յոյս ունէր յաւաջ տանելու Մահմետը, բայց յանկարծ հիւանդացաւ նա Մեդինայի մէջ: Իւր ընկերակիցը քաջալերելու համար, միւսանդամ կամեցաւ նա ժողովրդի հետ միասին աղօթել դէպ ի Ելեահը, ինչպէս սովոր էր առնել, մեկնելով Կուրանը. նորան պատգարակով բերեցին մզկիթը, Իւր մահուց յաւաջ աւանդեց նա կտակով, հալածել կուապաշտները Արաբիայից, և ամենևսեան որ չէին գաւանում Իսլամը, այլև սովոր պահել այս պատուիրանը — տարածել հաւատը զէնքով: Մահմետը մեռաւ 632 թուական. յունիսի 5 ին, Հիջրեթի 10 և լորդ տարում, 63 տարեկան: Կորա օրինակը ձարեց նորան շատ հետևողներ. այսպէս, անցաւ շատ ժամանակ, և ահա նորա մահուց փոքր ինչ յաւաջ դուրս եկան երկու ուրիշ մարգարէք որոնց

մինը, Մուսկլեմ անունով, գրաւից դէպ ի իւր կողմ մի քանի արաբացի ազգեր։

Մենք աշխատեցինք յանդիման կացուցանել արևելեան աշխարհի վերանորոգողի կեանքը, պատմելով միայն դորա մէջ եղած անցքերը։ Վ. երկուծելով Ղուրանը որ կարելի է ասել թէ մահմետական կրօնի և թէ նոյն իսկ Մահմետի նախատիպն է, կը քննենք վերանորոգողի բնաւորութիւնը և նորա կեանքի շատ միջոցները։

Կոստանդնուպօլսի պալատական մատուռի մէջ պահվումեն Մահմետականների սրբութիւնքը «Կրօնի մարգարէները» զանազան բաներ, որ պատկանումէին սուտ մարգարէին. մի սև բրդեայ հանդերձ, որ նա ըստ ասիական սովորութեան, որպէս շնորհ, հաղցրել էր մի բանաստեղծի որ իւր երգերով մեծացուցել էր նորա փառքը. մինը ջորս առաքեալներից որ դուրս էին գալրկել Մահմետի բերանից Ուհուդեան պատերազմի մէջ, և մի բուռն նորա մօրուքից։ Նորա հանդերձի այցելութեան օրը է մի շատ հանդիսաւոր աւուր (դա ասվումէ Շ խլքէ շարիֆ, սուրբ հաղորդակցութիւն) որ լինում Ռամազան ամսի 15 ին։ Սուլթանը իւր բոլոր պալատական կանների ուղեկցութեամբ մտանում մատուռը. Մահմետի պարգևական հանդերձը մեծաշուք հանդիսով դուրս են հանում քառասուն շատ թանգագին մեռաքսեայ վաթեղեների միջից և տալիս են համբուրելու բոլոր հանդիսականներին։ Այայց ամենից առաջ սուրբ է Յանջակ շարիֆը (Խալիֆների կանաչագոյն դրօշը) որ ունի մեծ ազդեցութիւն Մուսլիմների մէջ կրօնութեան վերայ։ Ամենայն ուղղահաւատ որ կարող էր պէտք կրել, պարտական է մտանել այդ դրօշի տակ, եթէ գա դուրս է բերած։ Այս հանդէսը համարվումէ մի մեծահարկի բան և պատահումէ շատ սակաւ։ Սուլթան Մահմուդը դուրս բերից այդ նուիրական դրօշը, երբ որ կամէր արմատաջինջ առնել Janitschariների զօրագունդը։

Իսլամական կրօնի հիմքը է Ղուրանը (որ նշանակումէ ընթերցանութիւն, գիրք), ապեռաքորթ, և ինչպէս կարծումեն Մուսլիմ ները, Աստուծուց առած Մահմետի բերանով, էէ աստրապիր մարդկային իշխանութեան։ Մահմետականները չունեն ոչինչ այլ գրաւոր օրէնք բաց ի նորանից և յաւելուածներից նորա վերայ, զոր օրինակ Սուննաթի կամ Հադիս (Մահմետի խօսքերը և գործերը), երկրորդ, Ջմաա, այսինքն ժողով և բացատրութիւնք նորա առաջին աշակերտների, ապա կիաս, ժողով իսլամականութեան

Իմամների և ուսուցիչների, սկսեալ Հիջրեթի 2 րդ դարուց մինչև վերջին դարերի Ջ-Ռ-Վ (սահմանադրութիւնք) ասած կարգերը: Ղուրանի մէջ գտանվումեն և բարոյական կանոններ, և նկարագրվումեն պատիժները դոյա անփոյթ առնելու մասին: Ողջ Ղուրանը բաժանվումէ 114 գլուխ, որ ասումեն Ըրաբացիք Սուրա, Սուվար. ամեն մինը սոցանից կրումէ մի առանձին, երբեմն բառական օտարոտի մակագիր. ղոր օրինակ, երկրորդ գլուխը ասվումէ Ս-վ, 16 երորդը Ռղռ-, 26 երորդը Քանապեղծներ, 27 երորդը Ղլէ-, 29 երորդը Ս-ղ (գործարար), 57 երորդը Երկ-. 80 երորդը Նա ընճռել է ճակատը. 105 երորդը Փիլ և այլն: Ողջրկեան դաքա, բայց ի հիներորդից կրումեն այսպիսի վերագիր «Ամենողորմ Աստուծոյ անունով»: Այս ձևը, գործ է ածվում Մուսլիմների մէջ գրեթէ ամենայն գործի մէջ, ըստ որում, ասումեն նոքա, բոլոր նահապետները և սուրբերը ունէին այսպիսի սովորութիւն: Ղուրանը յայտնվել է Մահմետին կէս մի Մեքքայի, և կէս մի Մեդինայի մէջ 23 տարու միջոցում: Նորա տունները գրած էին արմատնոս տերևների, և մագաղաթի վերայ. Աբուբէքրը եղել է առաջինը, որ հաւաքել է դորանց մի գրքի մէջ, բայց առանց որ և իցէ կարգի, իսկ Աբդալահ իբն Աբբասը, մարգարէի եղբօրորդին, մեկնել է նորան, և այդ պատճառով, մեծարվումէ Մուսլիմների մէջ որպէս հայր նոցա հաւատի: Մահազօրները իբրև գերագոյն իմամ ներ, պարտական են պահպանել, պաշտպանել և մեկնել Ղուրանի գլուխները, օգնականութեամբ Մուֆթիների, Մոլլաների և Կադիների: Բայց այս նախապատուութիւնը շատ անգամ տարաձայնութեան տեղիք է տալիս մահմետական մեկնիչների, որովհետև Ղուրանը պարունակում իւր մէջ ոչ թէ միայն մութ, անհասկանալի տեղեր, այլև յայտնի հակառակաբանութիւնք: Բայց ի սոբանից արաբական լեզուն, որով գրած է Ղուրանը, յուշանումէ, երկմտութիւնք շատ. մի և նոյն բառը ունի ամենևին այլ իմաստ, և պարտ է հասկացվել երբեմն բառացի, իսկ երբեմն այլաբանական մեքով. բայց անհամար բացատրութիւններ էլս առաել մշնաջուցել են մահմետական օրէնքի դիրքը:

Ղուրանի առաջին գլուխը «Նկրաձութիւնը» (Ալ Ֆաթիհա) ազօթքը Մահմետականների, է սկիզբը և վերջը նոցա իմաստութեան: Նորա անուանումեն սորան ազօթքի գլուխ, գանձ փառաբանութեան և գոհաբանութեան և համարումեն բոլոր Ղուր-

լանի իսկութիւնը. ահա դրա իմաստը. «Ամենողորմ Աստուծոյ անունով. գովութիւն և փառաբանութիւն Աստուծոյ, ամենայն արարածների տիրոջը, ամենողորմին և ամենադթածին, թագաւորին դատաստանի օրուայ. Երկրպագութիւնք քեզ և խնդրութիւնք քեզանից օգնութիւն. առաջնորդիր մեզ դէպ ի ճշմարտութեան ճանապարհը, որով ուղևորվում են նոքա որոնց ողորմած ես դու, ոչ նոցա, որոնց վերայ բարկացած ես դու և ոչ իսկ նոցա որ մոլորված են»: Ա՛ուրանի գլուխներից շատերը ցուցանում են որ Մահմեդը ականատես ճարտարախօսութեան տէր մարդ էր. Մուսլիմքը առաւելապէս մեծարում են հետևեալ տեղը երկրորդ գլխի մէջ որպէս վերին բանաստեղծական նկարագրութիւն աստուածային կատարելութեան. «Աստուած. Չկայ Աստուած բայ ի նորանից, որ է աստուած կենդանի և ինքնագոյ. նա անքուն է և միշտ արթուն. Նորան պատկանում ամենայն արարած երկնքում և երկրի վերայ: Ով կը համարձակվի յանդիման լինել նորան, առանց նորա բարի կամքին: Նա գիտէ անցեալը և ապագան, և ոչ ոք կարող չէ խորհուրդ լինել նորա ամենիմաստութեան մէջ, եթէ ոչ այնքան, ինչքան հաճոյ էր նորան թոյլ տալ այդ բանը: Նորա աթոռը տարածվում է երկնքի և երկրի վերայ, և երկուքի խնամատարութիւնը բեռն չէ նորա համար: Նա ամենաբարձրեալ, ամենակարող է»:

Մահմեդը կամենում է, որ աշխարհի բոլոր ազգերը խոստովանեն նորա ուստմը, և այդ պատճառով իւր կրօնական գաղափարքը քարոզել է ամենակարելի պարզութեամբ, որ հիմնած է Աստուծոյ կամքի անձնանուիրութեան վերայ, և պահպանել Երբեմն մէջ նոցա հին սովորութիւնքը, միայն տալով նոցա ուրիշ ուղղութիւն: Նա արտաքսեց մեծ մասը հեթանոսութեան և քրիստոնէութեան ծէսերի, թող տալով մի լոկ աստուածահաճոյութիւն (առանց յայտնական կրօնի): Ժամադրակայ աղօթք, պահք, հանապազօրեայ լուացում, ուխտագնացութիւն դէպ ի «մեծ տաճար» Մեքքան և հոչակաւոր Մեդինան, վերջապէս երկու կամ երեք ոտնք տալու մէջ. այս է բոլորը որով հերիքացել է արտաքին ձևակերպութիւնը իսլամականութեան, պահպանելով իւր ծէսերի մէջ հին նահապետականութիւնը: Նոյն պարզութիւնը երևեցաւ Մուսլիմների տաճարների մէջ. նոցա պատերի սպիտակութիւնը և մերկութիւնը պարտաճնում են ամենայն նեղս մտանող մարդ. չկայ

այն տեղ ոչինչ զարդարանք. 99 խորհրդական անուանակոչութիւնքը Աստուծոյ, վերագրած սեղանի տեղի վերայ, ասացուածք Ղուրանի միջից, դասատութեան ձևը և մի քանի կանխեղներ — ահա բոլորը, որով նշանաւոր է մի մուսլիմական մզկիթ:

Հանապազօրեայ աղօթք սահմանած է Մուսլիմների համար, հինգ. նոքա կարծումեն, թէ նոցա սկզբնական թիւը էր 50, բայց Ալլահը, Մահմետի խնդրանքով փոքրացրեց այս թիւը: Մուազզինի ձայնարկութեամբ, ուղղահաւատ իսլամականը ձեռքով վաւկելով ականջները կամ թէ ձեռքերը ծալելով կուրծից ցած, արտաբերում սովորական աղօթքը, և երբ որ աւարտած էր սորան, դեռ ևս ծունկերի վերայ չոքած, ողջունում դէպ ի երկու կողմ կենդանութեան հրեշտակը և մահու հրեշտակը որ ընդունումեն նորա խնդրուածքը: Երկրպագութեանների միջոցին, պատուէր կայ «չշտապել և չնմանել որձակներին որ կրկտումէին զարհհատիկներ», և շշափել երկիրը ճակատով, քթով և շրթունքով: — Ակամայ զարթնում մարդու մէջ մի երկիւղած զգացողութիւն, տեսնելով մի մուսլիմական քաղաքի ամբողջ բազմութիւն, որ թողուէր իւր բոլոր գործերը և կեանքի հոգսերը, որպես մի դերդաստան մատուցանելու Արարչին իւր աղօթքի հարկը....

Պահք պահված են Արաբիայի մէջ անյիշելի վաղ ժամանակներից, և հաւանական է, որ դոքա յառաջացան խորը առնելով սուրբ և անսուրբ կերակուրների մէջ: Արդելած էր ուտել միս, եթէ նա տակաւին նուիրած չէր, այսինքն եթէ նորա մի մասը զոհված չէր. ապա սահմանափակեցին նուիրանքը, աղօթք առնելով ապատնէի զենման միջոցին և աղօթելով որսի ժամանակին: Մահմետը տուել է շատ ազատութիւններ և վերացուցել է ամենայն խստութիւն կերակուրի մասին, սովի դիպուածում: Նորա հետևողքը ընդարձակեցին այդ ազատութիւնը թոյլ տալով այնպիսի դիպուածներում, ուր կեանքը վտանգի ներքոյ էր, ուտել սատակած անասուն, խողէ միս և միւս բաներ: Ներհասարակ չափաւորութիւնը եղած է մի հարկաւոր յատկութիւն, միտ դնելով Արաբիայի կլիմային և Արաբացոյ կեցութեանը, որ յաճախ սովալուծած կին լինել շատ սակաւապէտ: Ղուրանը հրամայել է պահել սահմանեալ թուով օրեր (Ռամազան, որովհետև այս ամսի մէջ Ղուրանը ցած է ուղարկվել երկնքից, և Աբրահամը, Մովսէսը և Յիսուսը ևս ստացել էին իւրեանց յայտնութիւնքը): Իւ անդին կամ

թէ ճանապարհորդին թոյլ է տուած նոյնքան թուով օր պահել ուրիշ ժամանակ: Մահմետը պահումէր երկու անգամ շաբաթի մէջ, որովհետև այս օրերի մէջ, ինչպէս կարծումէին Արաբացիք, Աստուած քննումէ մարդկային գործերը: — Լուացմունքը որ կարգել է Մահմետը, ինչպէս երևումէ, չունէին ոչինչ ֆիզիքական խորհուրդ: Ամեն մի մուսլիմի հրամայվումէ կատարել Ըդդաստ (ձեռնալուացք) աղօթքից յառաջ, Ղուրանի կարդալուց յառաջ և մկկիթը մտանելուց յառաջ: Ծհարաթ ասմամբ լուացման միջոցին լուանում են երեսն անդամը, և երեք անգամ լուանալով ամեն մինը, արտասանվումեն որոշեալ տուներ Ղուրանից: Եթէ չունէին ջուր, ճանապարհորդելով անապատների մէջ, տալ կարելի է կատարել լուացումը աւազով, կամ թէ բառականանալ արտաքին արարողութեամբք որ լինումէին այդ գործողութեան մէջ (Ղուղու): Խակ լիակատար լուացումը որ սրբումէ ամենայն մարմնաւոր անմաքրութենից և է նշանակ սրբութեան հոգևոր անմաքրութենից, ասվումէ Ղուսլ: Հասկանալի բան է, որ արտաքին կրօնական ծէսերը հարկաւոր էին Արաբացոց և շատ ձեռնտու են գտանվել նոցա բարքերը ազնուացնելու. բայց ներկայ ժամանակումս, Մահմետի աշակերտների յաջորդքը, առ հասարակ չեն ջերմեռանդ մուսլիմք և ունին փոքր փոյթ լուացանելու արտաքին ծէսեր: «Ձմրդ կրծնը, ասումեն նոքա, չէ մեզ պատշաճ. ուստի պիտոյ էր մեզ առնուլ ջուր լուանալու մեր անձը, եթէ մինչև ծմեզու ջուր չունինք. ուստի պիտոյ էր մեզ տուրք դործել, եթէ մեք ինքեանք ոչինչ չունինք. ինչու պէտք էր մեզ պահք պահել Բամազանի ամսումը, եթէ մեք պահումենք բոլոր տարին: Եւ ինչ հարկաւոր է մեզ ճանապարհորդել դէպ ի Մեքքա, եթէ Աստուած ամենայն տեղ է»:

Ներհատնացութիւնը դէպ ի Մեքքա, որ հարկաւոր էր Արաբացոց կռապաշտութեան ժամանակին, հաստատվեցաւ Մահմետի ձեռքով, որ անուանել է դորան ս-ըբ: Նա օրհնել է դորան և պատուիրել է պահպանել որոշեալ ծէսեր ճանապարհորդութեան միջոցին: «Մեղք չէ հանարվելու ձեզ, եթէ դուք խնդրելու էիք շահաստացութիւն վաճառականութեամբ ձեր ճանապարհորդութեան միջոցին» ասել է մահմետը Ղուրանի մէջ ապահանելով, որ այն մուսլիմը, որ ունէր կարողութիւն և այժ ուխտադնաց լինելու դէպ ի Մեքքա, և չէ լուացանում այդ գործը, հրատարակվումէ ամբարիշտ: Մեղինան, ուր հանդստանում են Մահմետի հոդիզին

նշխարքը, նորա մահուց յետոյ ստացել է նոյնպիսի սրբութեան իրաւունք։ Հազարաւոր ուխտագնացք ամենայն տարի գալիս են այս երկու քաղաքքս որ տավրաւին եւ Հարիճայն, այսինքն երկու նահելի սրբութիւնք։ Նորա ձանապարհորդուածն կարաւաններով. տոյանից առաւել բազմութիւնք դուրս է գալիս Դամասկոսից Տաճկաստանի սուլթանի ծախքով եւ բազկանում ամենաւոր ուխտաւորներից որ պահականում Տաճկաստանի թագաւորութեանը. կարաւանով Պարսկաստանից գալիս են Նդիսպահ եւ Մուղբեբանք կամ թէ Աֆրիկացի մուսլիմք. Ասորոյոց կարաւանը բազկանում Պարսկաստանի բնակիչներից, իսկ Նմեն նեանը Արաբիայի զանազան տեղերից, Նաւդայից, Սուամատրայից, Հնդկաստանից, Նուբիայից եւ այլն։ Ամենեքեան սքա ձանապարհորդուածն առ եւ որական եւ կրօնական խորհրդով, ըստ որում Աստուծոյ խօսքերը, որ յառաջ բերվեցան վերեւում, թոյլ են տալիս մուսլիմներին, տասուածահասոյ դորձի մէջ լցուցանել իւրեանց քաակը։ Այս ուխտագնացների (որ տավրաւին Հաջջի) թիւը անհամար է. ամենայն ուղղահաւատ պարտականութիւն է համարում գոնեայ միանգամ իւր կեանքում այցելութիւն գործել մեքգալէի գերեզմանի, եւ համբուրել այն տուրբ «սեւ քարը» որ իբրեւ թէ Աստուծոյ հրեշտակապետը երկնքից բերել էր Ադամայելին եւ դրել էր նորան Քաբայի մէջ։

Պատերազմը հաւատի տարածման համար, որ Մահմետի արմատական կանոնն է, կատով աւանդել է նա իւր հետեւողներին, եւ կարելի է ասել թէ թուրը է Ղուրանի նշանակը։ Մարգարէն անուանել է մուսլիմական պետութիւնը ասպետական ընութիւն եւ թոյլ է տուել աւենայն խորամանկութիւն կրօնի տարածման համար։ Սակայնով իւր դրութենից, հրամայել է նա երբեք չզադարեցնել պատերազմը մինչեւ չհաստատուի խաղաղական իշխանութիւնը։ «Երբ որ կը հանդիպիք անհաւատներին դաշտումը, սպանեցէք նոցանից շատերը, ձեռացածները պրկեցէք շղթաների մէջ եւ յետոյ արձակեցէք, կամ թող նորա ազատն իւրեանց անձը արծաթով»։ — «Ով ուղղահաւատք, հանդիպելով հեթանոսներին, որ բազմութեամբ գալիս են ձեր վերայ, մի դարձուցանէք ձեր երեսը. դուք չէիք որ խորտակեցիք յաղթվածքը Նեդրա քաղաքի մօտ, այլ Աստուած խորտակեց նորանց։ (Ղուրան, գլուխ 8)

Հաւատի համար պատերազմից յետոյ, ևս առաւել քարո-

գումէ Պ՝ուբանը բարի առնել: Ողորմութիւնը սիրապէս, ինչպէս երեսումէ, յայտնի չէր Աբրաթացոց մինչեւ Ա՝ահմեաի ժամանակը. նա կարգադրից այդ բանը, որ ձեռնտու լինի իւր աշխատակիցներին և լուսցանէ պատերազմի ծախքը: Պ՝ուբանի հիման վերայ ողորմութիւնը բաղկացնումէ 40 երորդ մասը այն եկամուտքի որ ստանումէ ամեն մի մուսուլման, և ահմանվումէ աղքատների, նորադարձների, դերվիների ազատութեան, չքաւոր պարտատանների, պատերազմների համար որ լինումեն իսլամական թիւնը տարածելու խորհրդով, այլև այն ուղեւորներին օգնելու համար, որ միացած էին ճանապարհի վերայ ուխտ գնալով դէպ ի նուխրատան տեղերը: Ջանազան մանր յանցաւածների համար, օրինքը ուղղահա տաների խղճի վերայ պարտականութիւն է դնում կկրակրել մի քանի աղքատք տահմանեալ թուով օրեր:

Պիտոյ է այս տեղ մեր ընթերցողների ուշադրութիւնը դարձուցանել երկու հակառակաբանութիւնների վերայ, որ ցուցանումէ Ա՝ահմեաը իւր Պ՝ուբանի մէջ. Ա՝ահմեաը, ինքը լինելով կերպարանող բանաստեղծ պատմութեան հանդիսի մէջ, այլև ծնած լինելով մի տղի մէջ որ ապրել է, բանաստեղծութեամբ և թողել է մեր համար այն «Ա՝օալլսկաթ» անունով յայտնի տաղերգութիւնքը և «Ջանդան» անիծել է բանաստեղծութիւնը: Ընդ Պ՝ուբանի խօսքերը որ կարդումենք նորա 27 երորդ տունի մէջ. «Պիտոյ էր ինձ ասել թէ, ինչ մարդու մօտ դիմումեն դևերը. նոքա դիմումեն անբարիշտ խաբեբաների, այսինքն բանաստեղծների մօտ, պատմումեն նոցա ամենայն բան, ինչ որ ծածուկ նկատած էին հրեշտակների մէջ, և իւրեանց կողմից յաւելցնումեն և առաւել առաքիսութիւնք: Խռնատրեցիներին ուղղուած է դէպ հաւատուրացքը. մի՞թէ չէք տեսանում, ինչպէս նոքա խախտումեն արդարութեան օրինքը և գովաստանումեն իւրեանց անձը մի դոյժով որ երբէք արած չեն: Իւր անէծքի միջից գուրս է հանել Ա՝ահմեաը ուղղահաւատ բանաստեղծքը միայն որ վարումեն սուրբ կեանք և յամառ յիշումեն Աստուած: Ընդհանրապէս Ա՝ահմեաը ապրելով ախտարմելութեան (ատարալօղիայի) հայրենի աշխարհում, Ըրաբիայի մէջ, և այնպիսի դարում, երբ ամենեքեան հաւատում էին դորա դաղանիքին, արդելեց բոլոր հմայական արուեստքը:

Ոտս բանաստեղծ Պուշկինի հետևեալ տողերում՝ որ ատած

են Պ՝ուրանէյ, գիտենգիապէս բացայայտած է Մահմետի խօսքը դէպ ի Մուսլիմքը.

«Դուք յաղթեցիք, ձեզ փառք,
Իսկ փոքրագիներին նախատինք.
Նոքա գնացին ոչ, երբ գանչուեր
Պատերազմի ձայնը, ըստ օրում
Չհաւատացին հրաշալի երազներին։

Երանի՞ սպանվածներին պատերազմի մէջ։
Այժմ նոքա ներս են մտել Եդեմի մէջ։
Եւ խորտակվ ի վայելչութեան մէջ
Որ ոչինչ բանով թուելու չէ։

Այժմ անցանենք դէպ ի մի այլ խնդրի քննութիւն, որ խորհրդաւոր է թէ խալամականի և թէ քրիստոնէի համար, դէպ ի կանայքը։ Նոցա դրութիւնը Արաբիայում Մահմետից յառաջ այնքան յաւելի էր, ինչպէս այժմ։ Նոր Օրէնդիայի վայրենաբնակ ազգերի մէջ։ Նոքա համարվում էին աստուածային բարկութեան նշանք, պիտանի միայն լինելու աշխատաւոր դրատի փոխանակ, և երբեմն ուրախացնելու իւրեանց հրամայողի սիրտը։ «Երբ որ Արաբացին լսում է թէ նորա կինը ծնել է աղջիկ, նորա երեսը մայրում է ոխութենից. այս լուրը երևում է նորան այնպիսի վատաբաղդութիւն, որ նա չէ համարձակվում ցոյց տալ երեսը մարդերի մէջ և չգիտէ, արդիօք արժան էր նորան պահպանել իւր աղջկայ կեանքը, իւր ամօթի համար, թէ թաղել նորան հողի տակ, և իւր ամօթը միանգամայն» (Պ՝ուրան. գլուխ 16 երորդ)։ Այս բառերը ըստ բառականին բացայայտումն են, թէ Արաբացիք ինչ աչքով էին նայում կանանց վերայ։ Ստամանիութիւնը որ չէր ամրանալիվում օրէնքով, ամուսնութիւնը որ չէր ամուսում սրբութիւն ոչինչ կրօնական արարողութեամբ, ձեռնարու էին բազմապատկելու անառակութիւնը և անարգելու կանայքը։ Ընդարձակ քակտողութիւնքը ամուսնութեան, կործանում էին կանանց բազդաւորութիւնը. և Մահմետը իրրև ջերմեռանդ երկրպագու կանանց ազգի, այլև մի հնոջ ընտրով հասած լինելով իւր մեծութեանը, ջանադիր եղաւ, ինչքան կարելի է, բարւոքել կանանց վիճակը և նուիրել է նոցա Պ՝ուրանի չորրորդ գլուխը բոլորովին, և 24 երորդի մի մասը։ Աղջիկ մանուկների սպանութիւնը հրա-

տարակեց նա մի ամենամեծ յանցանք, մի «արգելք մտանելու արքայութիւն» և ամենայն ծնողի համարվումէր մեղք, եթէ իւր աղջիկը չամուսնացէր 12 տարեկան հասակից յառաջ և թոյլ տար ընկնել անառակութեան մէջ: Մահմետը պատուիրեց նոյնպէս չլսոտիպել աղջիկները դէպ ի կնութիւն, և կամէր, ինչպէս գրած է Ղուրանի մէջ, որ հարսն ու փեսայ հարսանիքից յառաջ տեսան միմեանց. բայց նորա յաջորդքը աւելորդ սեսան այս պայմանը և «ամենակատարեալ մուսլիմը» այսինքն Օմար խալիֆը վերացրեց դորան: Հին յունդխմանութիւնը որ կանանց ազատութեան ջատագովքը առնումէն Մուսլիմներին, դուցէ հիմնաւոր են. բայց այդ բանի մէջ մեղաւոր չէ Մահմետը, ինչպէս մոռնծումեն ոմանք: Ողղահաւատքը շատ անգամ վարվումեն ընդդէմ Ղուրանի սահմանադրութեններին, հիմնվելով իւրեանց ուսումնականների խոտորնակ մեկնութեններին վերայ: Նպատականութիւնը այն մեքրութեամբ, որի մէջ թողել է Մահմետը, ոչինչ տեղ չէ գտանվում. և այս է պատճառը մեր մանրամասն խօսակցութեան այդ կրօնի վերայ:

Մահմետը թոյլ է տուել ունենալ չորս կին, թէպէտ ինքն ուներ ինն կին, բայց պատուիրել է չամուսնանալ կամենակից քոյրերի և սանտուր կանանց հետ, որ համարվումէին մերձաւոր ազգականք և զգուշացնում ամուսնութենից կամ ապրշտ կանանց հետ: Նա որ չունի կարողութիւն պահպանել կին, ունի իշխանութիւն աղախինք պահել: Ամուսնութիւն քակել թոյլ է տուած երկու անգամ, բայց ասում «Ատուծուն անհաճոյ գործ»: Օրանական սահմանափակութիւնք և բաց ի ուրիշ բաներից, այն կանոնը յատկապէս որ առաջին տղամարդը պարտական է տարեկան ապրուստը հասուցանել բաժանված կնոջը, եթէ դա չէր ամուսնացել դարձեալ, այլև իւր մեռանելու միջոցին կտակել նորան մի բաւական արծաթ — դժուարացնում ամուսնութեան բաժանումը: Աղջի կանացը առած է համարձակութիւն, չորս ամիս և տասն օր անցանելով գիշեր տղամարդի մահուան, վերստին ամուսնանալ: Մահմետը իշխանութիւն է տուել տղամարդերին թակել անհնազանդ կանայքը, բայց ամուսնական հաւատարմութիւնը քակելու համար, քարկոծել, կամ թէ կենդանի կենդանի թաղել նորանց հողի տակ. այս յեսին պատիժը մեր ժամանակումն փոխանակված է միւսով, այսինքն կտրել պարկերի մէջ, երբեմն կատուների հետ միասին, և

ջուրը ձգել: Ահա որ պատուաւորուած մի կին հաւատարմութեան քահանայութեամբ, եթէ մի օտար մարդ էր, պատահական է յառաջ բերել չորս վկայք. տղամարդը պարտ է հինգ անգամ երդուել Աստուծոյ անունով, թէ ուղիղ էր ասում: Ողջախոհութիւնը սահմանադրել է Մահմետը որպէս առաջին առաքինութիւնը կանանց, և ասելով, թէ ինչպէս հեշտ էր կորուսանել դրան, յաւելացնում. «Երբ որ տղամարդը ծնուած օտար կնոջ հետ միայնակ, սատանա դէմը լինում նոցա երրորդ ընկերակիցը»: Խիստ սահմանադրութիւնք կանանց քօղի և կանանց մշտական կեցութեան մասին յառաջացան նոյն իսկ Մահմետի իրրև ախտաւոր նախանձախնդիր մարդու բնաւորութենից. նա փոքր ինչ, որ հալածէր իւր մօրից իւր նախկին սեւաչեայ Աիշէն, որովհետև սորա երեսը առանց քօղի տեսել էր զրքոյը: Հաւատացնում են թէ այս բարկութեան լսելին, բոլոր կանանցը տեղ է սահմանել դժոխքի մէջ. այսպէս է գրած Սունեաթում: բայց սորան հակառակում են Ղուրանի խօսքերը:— «Ասա հաւատացեալ կանանցը, որ նոքա աննձահարեն իւրեանց աչքերը, պահպանեն ողջախոհութիւն և ցոյց չտան իւրեանց մերկութիւնը. թող չմեռանան նոքա ծածկել քօղով իւրեանց ղլուխը, վիզը և լանջքը, թող իւրեանց մերկութիւնը չցուցանեն ոչ ոքի, բաց ի իւրեանց տղամարդկերից կամ շատ մերձաւոր ազգականներից (Ղուր. գլ. 24): Տղամարդը լիակատար իշխան է կնոջ վերայ. «Ձեր կանայքը են ձեր անպատառանքը, վար ու ցանք արեցէք, ինչպէս հաճոյ է ձեզ»: Մահմետը ախտաբորբոք սիրելով կանայքը, այնու ամենայնիւ չէր նոցա անձնատուր. մի տեղ ասում նա, ով որ կարողացել է ընդդիմանալ մի հարստական և զեղեցիկ կնոջ պատարանքին, տանալու է մեծ վարձեր տհղ դատաստանի օրին: Մահմետը խոստովանելով կանանց մէջ բոլոր յատկութիւնքը մի կատարեալ Մուսլիմի, այլև տալով նոցա իշխանութիւն լինելու դատաւորք, այնու ամենայնիւ թոյլ չէ տուած նոցա կատարել թափատուութիւնը. «մի ժողովուրդ որ կատարվում կնոջ ձեռքով, չէ գտանելու փրկութիւն»:

Մահմետը թևթևացնելով կանանց դրութիւնը, հոգալով ձու է եղել ծառանելի մասին, և մոլկութեան բարեկամքը պարտական են շնորհակալ լինել նորան Ղուրանի այս խօսքերի համար. «Ստուած ստեղծել է ծառայքը որպէս ձեր եղբարք. ով որ առանց պատճառի ծեծում նորանց, պարտական է շնորհել նոցա

ազատութիւն: Պատասխանի օրէն Աստուած կը պահէ իշխանին որ անիրաւաբար պատժել էր իւր ծառան»: Շնորհակալ լինինք Աստուծոյ և այն մասին, որ նա պատուիրել է չզոհել նիւթերնիս, բայց այս սովորութիւնը Հնդկաստանից անցանելով դէպ ի Աբաբիա, յաղթել է օրէնքին:

Հատուցումը «արիւն փոխանակ արիւնի» եղած էր հնուց Աբաբիայի մէջ, ըստ որում Աբաբացիք հաւատում էին թէ յոյզ կամքում չէ այն տեղ ուր թափվել է անմեղ արիւն. բայց Աստուած երբէք ոչ աննեւնին վերացրել է այդ օրէնքը, գոնեայ մեծապէս թուլացուցել է նորան: Աստու պատիժ սահմանել է նա այն սպանութեան համար որ եղած է չար խորհրդով, բայց անզգուշութեամբ և յանկարծ դիպուածով սրած սպանութիւնը թոյլ է տուել քաւել արծաթով. նա ասել է. «մարդուս կեանքը ձրի չէ տրվում: նա սուրբ է, և կարելի չէ ձեռք բարձրացնել նորա վերայ առանց վրէժխնդրութեան»: Ալի հատուցումը «աչի ընդ աչան և առամն ընդ առամնան» նա վերացուցել է նոյնպէս, և այն վէրքի համար որ հասուցած էին մի մարդու, թոյլ է տուած վճարել մի որոշեալ արծաթ. շատ վաճառատու վէրքի փոխարէն 100 ուղտ, կամ թէ ազատութիւն շնորհել մուսլիմ ծառային:

Աստու պատիժ դրած է չորս տեսակ յանցանքի համար. որ են ընդդիմութիւն թագաւորի կամքին, սպանութիւն, հատատութիւն և պոռնկութիւն. յետոյ յաւելացուցին գողա վերայ և աւազակութիւնը:

Աբաբացիք իւրեանց նահապետական բոլք ու վարքի մէջ, այնքան պատուում էին սեփականութեան իրաւունքը, և Աստուած հրամայեց մի գողութիւն, որ ասվել էր երկիք դրաքմէից, պատժել կտրելով ձեռը: Սուտ վկան ենթարկվում էր հրապարականն խոշտանգութեան:

Մուսլիմների հոգևորական դասը բաժանվում էր հինգ կարգ: Գորա գլխապետը ասվում էր Մուֆթի կամ խալիֆայութեան Շէյխ (Շէյխ ուլ Իսլամ) և ունի այսպիսի վերատուութիւն. «Իմաստուն, աննուամեծը բոլոր խորհրդներն իմաստուններից, գիտնականը բոլոր գիտնականց մարդկից, որ կարող է վճռել բոլոր տարակուսութիւնքը հատատի մասին և աւարտել ամենայն վէճեր. բանալին ամենայն ծածուկ ճշմարտութիւնների, վայելուն լաստիկը գիտութեան գանձների»: Սորանից յետոյ գալիս են այն Շէյխերը, որ ա-

*վենայն ուրբաթ օր քարոզումն մզկիթների մէջ. ապա խոնէբէրը որ պարտական են կատարել հանդիսաւոր աղօթքը (խուտբաթ) վասն պահպանութեան ուղղահաւատների թագաւորի առողջութեան. յետոյ նամակները որ նախկին են գասնվում հինգ օրական աղօթքի միջոցին և լցուցանումն բոլոր կրօնական արարողութիւնքը ամենայնի, թագման և այլ միջոցներում. վերջապէս Մուշէնէը որ կատարումն ժամկոչների պաշտօն, բարձր աշտարակներից փառաբանելով Աստուած և կոչելով ժողովուրդը դէպ ի մզկիթները, որովհետև խալամականք չունին զանգակներ, ինչպէս քրիստոնեայքս. հուսկ յետոյ Գ՛ամ անուանով յայտնի խորանապետը մզկիթների մէջ: Ինչպէս Պրիստոնէութիւնը, նոյնպէս և խալամականութիւնը ունի իւր վանականները, որ սովումն դարվիշք (յատկապէս աղքատք, մահմետական արեղայք) պարսիկ լեզուով, բայց արաբերէն ֆակիրք: Մահմետը կամեցած չէ միայնակեցութիւն և թէպէտ ասել է ինքը. «չկայ միայնակեցութիւն Խալամի մէջ» (Լա րուհբանիաթան ֆիլ Խալամի) որով երևումէր թէ կամի նա միշտապէս հետ պահել Խալամականներից նմանողութիւնը հնդկական և յունական վանականների, սակայն անապատակեաց Ալթաթոյ հակամիտութիւնը դէպ ի միայնակեցութիւն և մահմետական հոգեւորականաց շուտով յաղթող հանդիսացաւ մարգարէի վերոյիշեալ խօսքի վերայ. և մի այլ խօսքը Մահմետի «Ալ ֆակրու ֆախրի» (աղքատութիւնը իմ պարծանքս է) պիտոյ է սպասաւորէր որպէս մի վերարկու, որի տակ վանականութիւնը, արդէն երևան տարի Մահմետի մահուց յետոյ, սպրդվեցաւ Խալամի մէջ:

Պէտք մեզ դեռ ևս յիշատակել այն հերձուածները որ բաժանված է բոլոր մահմետական ժողովուրդը. դորա գլխաւորքն են Սունէթ և Շիա: Առաջ սկզբում էին քաղաքական բաժինները և յետ ազգացան այն միջոցին, երբ որ մի և նոյն ժամանակում երևեցան երկու խալիֆք, Մուավիէ և Ալի: Սունիները կուսակից էին Մուավիէի բաժինին, Շիները Ալիոյ: Իւրաքանչիւր հերձուածը փախադարձ սաստութեան պատճառով հնարատեղծել է իւր համար մի առանձին կրօնական ուսումն, և այսպէս երկու կողմից յառաջացան անիծողութիւնք և դատապարտութիւնք հերետիկոսութեան: Շիները նախատում էին իւրեանց հակառակորդքը որպէս թէ սուքա հնարել էին Սունիի օրինագիրքը, մոռացել էին սուրբ լուացման կանոնները, ուրացել են Ալին, և այլն: Ինչպես-

*Թիւնը արմատացաւ դարերով, և Մուսավիէի յաջորդքը անպատրաստ անիծուածին Ալիու չիշատակը, որպէս դարձեալ սորա հետևողքը իւրեանց կողմից չէին մոռանում նոյն կշռով հատուցանել երկաթ ազգին խալիֆներին, Աբուբէքրին, Օմարին և Օսմանին, այլ մանաւանդ հայհոյուածին «Հ՚ուն Մուավիէին»: Գրքոյս վոհսնորդքը այս հերձուածների են տ՚ղկնեբը (Ասունիթք) և պ՚բնկնեբը (Հ՚իւթք). բայց սոքա փոքր ի շատէ հաշտուած են իւրեանց կարծիքների մէջ Ալիու մասին, որին պարսիկները մեծարում են ոչինչ պակաս քան թէ նոյն իսկ Մահմեդը, և պնդում են, թէ Ալին դեռ ևս իւր մօր արգանդումը, խոստովանել է արդէն իսլամական կրօնը: Որիշ հերձուածներ, զոր օրինակ Օհէդիանք, Ռէյապեանք կամ Աբադեանք չեն բազմանիւ և ունին հետևողք ըստ մեծի մասին Աբուբիայի մէջ: Վ՚եհաբիտեան հերձուածը յառաջացաւ հաւիւր տասն տարի յառաջ և նորա հիմնարկող Հ՚էյխ Մուհամմեդի յառաջադիմութիւնը ապացուցանում են թէ ինչպէս խառնուած է իսլամականութեան հիմքը և թէ ինչպէս հեշտ էր յառաջացնել մի կրօնական յեղափոխութիւն մուսուլմանների մէջ, գործ կատարելով նոցա մոլեռանդի անուամբ:

Վ՚երջացնենք մեր ճառը այսպիսի ծանօթագրանութեամբ Մահմեդի և նորա քարոզած Ղուրանի վերայ:

Վաղաքայի կարգերի մէջ Մահմեդ գործուցել է իւր ուշադրութիւնը ժառանգութեան կարգի վերայ, աշխատելով տալ դրան արդար և խելացի կանոններ: Ամուսնութեան օրինքը կարգադրուած նա ուղիղ ընդարձակ կերպով: Բազմակնութիւնը չէ կարգադրել և չէ կամեցել Մահմեդը վերացնել. այնու ամենայնիւ մնում նորան այն պարծանքը, որ նա համեմատաբար հին ժամանակի հետ ուղիղ բարւոքել է կանանց դրութիւնը: Պատժողութեան օրէնքը, ինչպէս սեռանք, շատ նման է մովսիսականին. և վրէժխնդրութիւնը արիւնով թողլ տուած է. այնու ամենայնիւ պատուիրում Մահմեդը իւր հաւատացեալներին հաշտողականութիւն և ներողութիւն կրած անիրաւութիւնների: «Վ՚րէժը պէտք է հաւասար լինի հասուցած անիրաւութեանը. ով որ վրէժխնդիր է իւրեան հասած անիրաւութեանը, չէ պարտական պատժի. բայց ով որ ներում անիրաւութեան, նա ունի գոհանալու Աստուծոյ գովասանութիւնը»: Վաղաքական պատուէրների մէջ յատկապէս արժանի են յիշելու այն պատուիրանները որ վերաբերում Մուս-*

377 – 394 ՀԸ պահպ ։

նալն, եթէ օդի ընդդիմադրութիւնը կամ այլ խափանարար պատճառք չը գադարեցնէին նորան։ Տարուբերական շարժողութիւնքը որ ճօճանակը այս կերպով կատարումէ դէպ ի այս և այն կողմ, լինումն այնքան արագ, ինչքան որ մեծ էր դրդողական ղօրութիւնը, ծանրութիւնը, և ինչքան կարճ էր ճօճանակը։ Ուրեմն, միտ դնելով ծանրութեանը, կարելի է գտանել մի ճօճանակի երկայնութիւն որ մի սեկունդի մէջ պիտոյ է կատարէր մի հատ տարուբերութիւն, որպէս դարձեալ ճօճանակի երկայնութենից գտանել ծանրութիւնը։ Երկրի օրական շրջաբերութենից յառաջացած կենտրոնախոյս ղօրութիւնը, որ Էկվատորի տակ ներգործումէ առաւել սաստիկ, հալածումէր մարմինքը միջնակէտի մօտից, ուրեմն ուղղակի հակառակ էր ծանրութեանը, ուրեմն և բարձրացնումէ ոչ թէ միայն Էկվատորը, այլև փոքրացնումէ այն տեղ ծանրութիւնը։ Բոլոր մարմինները Էկվատորի տակ աւելի թեթև են, և ծանրանումեն նոյնքան աւելի, ինչքան որ մօտենումեն բևեռներին։ Մի և նոյն ճօճանակը որ Պետերբուրգի մէջ ղարկումէր սեկունդներ, Էկվատորի տակ առաւել նուազ ծանրութեան պատճառով, առնելու է աւելի դանդաղ շարժողութիւնք, ուրեմն պիտոյ է, և այն տեղ մի սեկունդի մէջ մի ճօճանք առնելու համար, կարճացնվէր, ինչպէս դարձեալ, հարկաւոր էր երկարացնել ճօճանակը, երբ որ նա մօտենումէ բևեռին։ Աստղաբաշխները սկսեալ Էկվատորից մինչև բևեռական շրջանակը կատարել են այս բանի մասին շատ ճիշդ փորձեր և ստուգել են բոլորը այնպէս, ինչպէս որ երկրի շրջաբերութենից հետևումէր, միտ դնելով ծանրութեան օրէնքներին։

Օրական շարժողութիւնը երկրի, այս առաջին մասը կոպերնիկեան Համակարգութեան հաստատված է ուրեմն նոյն իսկ փորձով։ Թէպետև մեք չենք ղգում այս շարժողութիւնը, այլև կարող չենք ղղալ, որովհետև դա չէր լինում միջոցներով, այլ ամենևին միակերպ, և որովհետև մեք ինքեանքս, այլև յատակը որի վերայ կանգնած ենք մեք և օդը որ շնչումենք, որովհետև բոլորը միասին շարժվումէ. բայց այդ շարժողութիւնը տեսանումենք այն բանի վերայ, որի վերայ կարող են տեսանվիլ շարժողութիւնք, այսինքն մեր շրջակայ առարկաների տեղափոխութեան վերայ (երկնքի յեղափոխութեան վերայ) և նոցա փիլիսքական ներգործութենների վերայ, երկրի տափակաձևութեան և նորա մակերևութի վերայ եղած զանազան ծանրութեանը միտ դնելով։

Երբ որ կոպերնիկոսը առաջին անգամ քարոզեց այս ճշմարտութիւնը, ամենասաստիկ ընդդիմախօսութիւնը որ արեցին նորան, էր այս. «Եթէ երկրագունդը, ասումէին, պտոյտվումէ արևմուտքից դէպ ի արև-

եկք, ուրեմն մի քար, որ մի աշտարակի ծայրից ուղղահայեաց ցած էր թողած, ոչ թէ նորա ոտքումը վայր էր ընկնելու, այլ ղղալի հեռաւորութեամբ դէպ ի արևմուտք, ըստ որում աշտարակը բոլոր երկրի հետ միասին, քարի վայրանկաւութեան միջոցումը, շրջվել էր դէպ ի արևելք։» Զէին մտաբերել որ բոլոր մարմինները որ պատկանումէին երկրին, օդը որ շրջապատումէ նորան և այն քարը որ ես ձեռքիցս թողումէի ցած, մանակից էր երկրի շրջաբերութեանը. ուրեմն քարը իւր վայրանկաւութեան միջոցին ունի նոյն շարժողութիւնը դէպ ի արևելք, ինչպես աշտարակի ծայրը։ Զէին մտաբերել այն շատ հասարակ փորձը, որ մի քար ներքև թողած մի արագընթաց նաւակայմէ վերևից, ցած է ընկնում ճշդապէս նորա ոտքումը, թէպէտ նաւը նորա անկման միջոցին նորա տակից յառաջ էր վազում, և թէ դնդակի ու կոնտեի խաղերը և այլ նմանապիսի մեքենական ղբօսանքներ նաւի շարժողութեամբ չէն խափանվում։ Այս ընդդիմախօսութիւնը երևեցաւ ուրեմն ոչ թէ անհիմն, այլև յետոյ մի նոր ապացոյց դարձաւ երկրի շրջաբերութեան մասին։ Նոյն Բրիտանական փիլիսոփայ Նիւտոնը, որ երկրի տափակացած ձևը հաշուել էր քննելով նորա շրջաբերութիւնը, նկատեց նմանապես թէ մի քար ցած իջանելով մի աշտարակի ծայրից, ոչ թէ դէպ ի արևմուտք, այլ դէպ ի արևելք պիտոյ է շեղվի, եթէ երկիրը պտոյտումէ դէպ ի այս կողմ։ Այն րոպեումը, երբ որ քարը ընկնումէ ձեռքից, նա ունի նոյն շարժողութիւնը դէպ ի արևելք, ինչ շարժողութիւն ունի ոչ թէ աշտարակի ոտքը, այլ ծայրը, ուստի ներքև է ընկնում քարը. բայց աշտարակի ծայրը ունի մի աւելի արագ շարժողութիւն, քան թէ նորա ոտորին մասը, ըստ որում աւելի հեռի լինելով միջնակէտից, կատարումէ և աւելի մեծ շրջան։ Այս աւելի արագ շարժողութիւնը դէպ ի արևելք պահպանումէ քարը իւր անկման միջոցին. ուրեմն նա, մինչև կը հասանէր երկրին, կատարումէ մի աւելի մեծ ճանապարհ դէպ ի արևելք, քան թէ աշտարակի ոտքը, ուրեմն և ցած է ընկնելու նորա արևելեան կողմումը։ Եւ այս բանի մասին վազուց արած են շատ ղղուշաւոր հետաքննութիւնք և ստուգած են նորա ճշմարտութիւնը։

Իվ որ կամենումէ աշխատութիւն յանձն առնուլ այս բոլոր պատճառները մի միտր ուշադրութեամբ կշռելու, նա միանակ երկմտելու երկրի օրական շարժողութեան վերայ, պիտոյ է մանաւանդ թէ զարմանար, թէ հարկաւոր էին հարիւրաւոր տարիներ այս ճշմարտութիւնը ընդհանրապէս ընդունելի կացուցանելու համար։ Բայց պիտոյ է ասել, որ նախնիքը արժանի են մեր ներողամտութեանը, ըստ որում ամենևին անյայտ էին նոցա փիլիսոփայական ապացոյցքը այս շարժողութեան մասին, որ նոր Եւրոպացոց հանճարի գիւտն են։ Բայց թէ այս յայտնագործութենից

յետոյ ևս գտանված են ընդհէտ ու աստեղաբաշխք որ չէր կարելի խե-
լամուտ կացուցանել ճշմարտութեանը, այդ բանը կարելի է միայն մեկ-
նել մարգերի կամակորութեամբը իւրեանց հնացած ու ծերացած կար-
ծիքների վերայ, այն կամակորութեամբ, որ ցաւելի է ասել, աւելի
ըզբաւոր օրինակներով երևումէ մեզ աշխարհի պատմութեան մէջ։ Ար-
դարև, չկին կարող մարդիկ յանձն առնուլ և խոստովանել թէ այն մո-
լորակը որի վերայ բնակումենք մեք, որ և մեք, թէևնա մի շատ փոքրիկ
ու ցնծալի մարմին է, կը ցանկանայինք շինել տիեզերքի միջնավայրը,
ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ, մի հիւանդ, Ամենակարողի ձեռքից դուրս
կլորված, որ բաց ի իւր յատուկ բնակիչներից, սակաւներին միայն նկա-
տելի պտոյտովումէ շրջանակի պէս և այժմ երևակայումէ իւրեան, թէ
բոլոր դունդերը տիեզերքի մէջ պար են գալիս նորա չորս կողմով։ Եւ
մարդուս բնաւորութիւնը այսպէս է. իւր խաղաղութիւնը չը վըդովե-
լու համար, նա ձգումէ բոլոր տիեզերքը շարժողութեան մէջ, և այն
բաղդաւորը որ կարող էր այդպէս առնել, արժանի չէ ցաւակցութեան,
այլ նախանձելի է այն մարդու պէս որ իւր փափուկ բարձի վերայ նըս-
տած, հանգիստ աչքով նայումէր աշխարհի գործերի վերայ և երևա-
կայումէր իւրեան, թէ պատերազմի բոլոր ահարկու տեսարանները որ
դառնացնումեն մարդկութեան բարեկամի սիրտը, թէ այն հեղեղքը
մարդկային արիւնի, այն ցրած ու մոխրացած քաղաքները, ոտնակոխ
արած հունձները, կործանած արքայական աթոռները և սորան ու նորան
բաշխած թագերը ոչինչ էին, եթէ ոչ մի խաղալիք որ տուած էր նո-
րան իւր ժամանակը քաղցրութեամբ անցուցանելու։

Երկրի օրական շրջաբերութենից յառաջացած կենտրոնախոյս
ըզրութիւնը պիտոյ է բոլոր մարմինները թափ տար երկրի երեսից և
ձեղքէր նոյն իսկ երկրայատակը, եթէ ծանրութեան ամենակարող
կապը չը պահէր այդ մարմինները ժողով ու միասին։ Ծանրութիւնը որ
սովորաբար համարումեն վայր ընկնող մարմինների յատկութիւն, մի այլ
բան չէ, եթէ ոչ, մի ըզրութիւն որ ուղղած էր դէպի երկրի կենտրոնը, որ և
շատ գերազանց էր կենտրոնախոյս ըզրութենից։ Այս ուժգին ձգտո-
ղութիւնը դէպ ի երկրի միջնավայրը, պատճառ է, որ ամենայն մարմին,
եթէ չէր պիտոյ նորան գլորվել իւր տեղից, պիտոյ է ունենար ուղղա-
հայեաց կայք, այսինքն մի այնպիսի կայք որ երկայնվելով պիտոյ է
անցանէր երկրի կենտրոնի միջից. պատկերացուցէք ձեզ երկիրը որպէս
մի փոքրիկ գունդ որի բոլոր մակերևութեի վերայ խրած էին դնդասեղներ
(քորոյներ) որոնց սուր ծայրերը ուղղած էին դէպ ի գունդի միջնա-
վայրը. յետոյ ընդունեցէք այդ գունդը երկու հանդիպակաց ասեղներից,
որ պատկերացնումէին բևեռները, պտոյտ բերէք նորան իւր առանցքի

վերայ աջ կողմից դէպ ի ձախը, և նկարագրեցէք մտքով, որպէս թէ այդ դունդը դտանվումէր մի անհամեմատ աւելի մեծ, դատարկ դունդի մէջ, որի մակերևոյթի վերայ աստղները իւրեանց պատշաճաւոր կացութեամբ միմեանց մօտ նշանակած էին. այնուհետև ունէիք դուք մի լիակատար պատկեր օրական շարժողութեան: Այն երկու ասեղները որոնց վերայ դունդը ամրանումէ, են միայն, որ անշարժ էին. բոլոր միւսերը պտտվումեն դէպ ի ձախ կողմը, ուրեմն մնտենումեն այն աստղներին որ կան նոցա ձախ կողմումը, յետոյ թողումեն նորանց իւրեանց աջ կողմումը և հեռանումեն դէպ ի ձախ. կամ ուրիշ բառերով ասենք. աստղները երևումեն թէ շարժվումէին ձախակողմից դէպ ի աջակողմ: Այն կէտը որ կայ առաւել մեծ երկնային գունդի վերայ, որ ուղղակի կանգնումն է միւս ասեղի գլխի վերայ, ասվումէ Զենիտը (գագաթնակէտը) այն երկրատեղի որ պատկերացնումէ այս ասեղը. երկնքի հակադիր կէտը ասվումէ նորա Նադիրը (սուղակէտ): Երկու ասեղները, որոնց ծայրերը կամ ոտերը հակադարձ են միմեանց, պատկերացնումեն Հակոտնեայք (Անտիպոդք): Եթէ մտածէինք այլևս մի քանի փայլուն միջատներ, որ մեծ դատարկ գունդի մակերևոյթի վերայ, պայծառ կէտերի մէջ որ պատկերացնումեն աստղները, սողումեն ծանրապէս, ապա նայեցողի աչքը որ բռնումէր այս ասեղներից մինի տեղը, պիտոյ է կարծէր թէ տեսանումէ այս միջատները բոլոր երկնքի հետ միասին շրջաբերվելով, և նոյն միջոցին նկատելու էր որ նորա իւրեանց կացութիւնը աստղների մէջ կամ թէ երկնակամարի վերայ փոփոխումէին. նա նկատելու էր նոցա ընդհանուր օրական, բայց և սեփական շարժողութիւնը: Այս բանը առաջնորդումէ դէպ ի արեգակի և մոլորակների շարժողութիւնը:

(Շարունակութիւնը յետագայ տետրակում:)